



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10533



ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ԲԶԻՑ ՀԱՄԱՏԱՐԱԾ
ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՌԱՅՈՆՈՒՄ



ԽԵԶԴԻՐ ԺԱՂՈՎՔԱՐԴԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ԼՐՈՇԿՎԱ, 1931



3100 M5

9-32

14 MAR 2013

14 MAR 2013

14 MAR 2013

Ի. ԳԱՎՐՅՈՒՇԻՆ

24 SEP 2006 104
112

642

E1 DEC 2009

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԲԺԻՇԱԸ

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՍԱՆ ՌԱՅՈՆՈՒՄ

БИБЛИОТЕКА
МИСТИЧЕСКОГО
ДОКТОРСКОГО ИНСТИТУТА
ФОНДАЦИИ НАУК
СССР

ԽԱՅՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931

908 938 1 8

РИФ. НАМ. 11

10533

«Ինդրատրացման ճանապարհով մենք
սրընթաց զնում ենք դեպի սոցիալիզմ՝
մեր յետեվը թողնելով ոռասատանյան
դարավոր յետամացությունը։ Մեր յեր-
կիրը դառնում ե մետաղի յերկիր,
ավտոմոբիլացիայի յերկիր, տրակտո-
րիզացիայի յերկիր։ Յեզ յերք ԽՍՀՄ
կնստեցնենք ավտոմոբիլի, իսկ գյուղա-
ցուն տրակտորի վրա — այն ժամանակ
թող փորձեն մեզ հասնել պատվարժան
կապիտալիստները, վորոնք պարծենուա
են իրենց «քաղաքակրթությամբ»։

(Ի. Խոալին. «Մեծ բեկման տարին»)

Թարգմ. Ն. Տ.-Մ.



60194.67

Главлит № А-77.179 Заказ № 2988 Тираж 5.000
Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

ԱՐԱՋԻՆ ԿՈԼԽՈԶԸ — „ԲԱՏՐԱԿ“

Յեղան վոքրիկ գետակը բաժանում և յերկու հավասար մասերի կրասավկա մեծ դյուզը, վորը գտնվում է Ներքին-Վոլգյան յերկրի Սամոյլովսկիյ համատարած կուեկտիվացման ռայոնում :

Մինչև հեղափոխությունը կրասավկան հարուստ դյուզ եր : Մի խումբ կռւլակներ անխնա շահագործում ելին բատրակներին և չքավորներին : Կռւլակային վերին խավի (մինչև հեղափոխ .) տիրապետության հետքերը առանձնապես ուժեղորեն զգացվում ելին կրասավկայում հեղափոխության առաջին տարիներում : Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դեռ յերկար ժամանակ պարագիտ կռւլակները մեծ աղ-դեցություն ունենին վոչ միայն գյուղացիության յետպմանաց խավերի վրա, այլ և հասարակական կազմակերպությունների վրա, գյուղական խորհրդի, փոխադարձ ոգնության ընկերության և կոոպերացիայի վրա : Հոկտեմբերյան հեղափոխությունը վոտի կանոնեցրեց գյուղի ճնշված մասսաները՝ պայքարելու գյուղական բուրժուագիտայի դեմ, վճռականապես դեն շարտեց շահագործման լուծը աշխատավորների ուսւության համար առաջին տարրից, համախմբեց ամենից առաջ դյուզի պրոետարական և կիսապրոլետարական մասսաները, վոր նրանք, գաչն կապած միջակ դյուղացիության հետ, զիմեն սոցիալիստական շինարարությանը : Կրասավկայում կատաղությամբ բռնկվեց գասակարգային կռիվը : Կռւլակներն առանց կռիվի չելին տալիս իրենց դիրքերն ու գյուղացիության յետամնաց խավերի վրա ունեցած իրենց ազդեցությունը : Բատրակներն ու չքավորները կօմունիստների առաջնորդությամբ համառորեն արշավում ելին զասակարգային թշնա-

մու դեմ : Սակայն պահանջվեց մի քանի տարվա վճռական պայքար, վորպեսզի հնարավոր լինի ջարդել կուլակին, համախմբել դլխավորապես բատրակներին և չքավորներին և դնել կոլխոզային շինարարության ամուր հիմքը :

1925 թվականը Կրասավկայի գյուղացիների կյանքում հուղումնալից անցքերի տարի յեր : Այդ տարին առաջին անգամ Սամոլլովակիյ ռայոնում բռնկեց կոլխոզային կայծը : Մեծ չարչարանքների ու դասակարգային թշնամու դեմ մղվող կատաղի կոիմսերի մեջ ծնվեց առաջին կոլխոզը — «Բատրակ» : Յոթ տնտեսություններից բաղկացած բատրակների մի խումբ կազմակերպեց գյուղատնտեսական արտել : Դժվար եր բատրակների համար աշխատանքը, ողնող չկար, կուլակները անխնա հալածում եյին յերիտասարդ կոլխոզնիկներին, գյուղացիները նայում եյին կասկածանքով : Բատրակ-կոլխոզնիկները չեյին հուսահատվում, նրանք հաստատապես ու համարձակ կառուցում եյին նոր կյանք : Ահա մի բատրակուհի-կոմյերիտական ինչ և պատմում մեզ «Բատրակ» արտելի գոյութան առաջին որերի մասին :

— Սկզբում դժվար եր մեզ համար : Բանող անասուն և գյուղատնտեսական գործիքներ համարյա չունեյինք : Ստիպված եյինք աշխատել որ ու գիշեր : Ամեն քայլավոխում կուլակները մեզ հալածում եյին, գյուղացիները կասկածանքով եյին վերաբերյում : Նույնիսկ գյուղացի աղջիկները չեյին ցանկանում խոսել մեզ հետ, վորովհետեւ մենք կոմունարներ և անաստվածներ եյինք : Այժմ մենք ապրում ենք նոր կյանքով, մեր կոլխոզը ամսե ամիս ամրանում ե : Կարի և ձեր դպրոց ենք բացել : Աղատ ժամանակը խմբովին կարդում ենք «կոմսոմոլսկայա Պրավդա» թերթը :

«Բատրակ» կոլխոզի կազմակերպելուց չեր անցել յերկու առարի, յերբ կրասավկայում յերեան յեկավ նոր կազմակերպություն-մեքենաների ընկերություն :

Բայց այս անդամ մեքենաների ընկերության նախաձեռնողները արդեն բատրակները չեյին, այլ նրանք, վորոնք առանյակներով գյուղատնտեսական բարդ մեքենաներ ունեյին, վորոնք շահագործում եյին բատրակներին և չքավորնե-

րին : «Բատրակ» կոլխոզի ջերու կուլակները կազմակերպեցին մեքենաների ընկերությունը այն նպատակով, վոր ավելի անխնա շահագործեն բատրակներին և չքավորներին : Ընկերության մեջ ընդունում եյին միայն նրանց, վորոնք գյուղատնտեսական շատ մեքենաներ ունեյին : Հասկանալի յե, վոր արտել մտնում եյին բացառապես կուլակները :

Մեքենաների ընկերության կազմակերպվելու հենց առաջին որերից «Բատրակ» արտելի և կուլակային ընկերության մեջ մի կատաղի կոփվ ծագեց : «Ռվ-ում կհաղթե» — կամ «Բատրակը» գլուխ կանցնե բատրակային-չքավոր մասսաների շարժմանը և նրանց կտանի սոցիալիստական զարգացման ձանապարհով և կամ հաղթանակը կտանի կուլակների խմբակը և այն ժամանակ «Բատրակը» պիտի վոչնչանա — հարցը այսպես եր դրված :

Շատ մեծ ջանքեր եյին պահանջվում . Հարկավոր եր բատրակներին և չքավորներին այնպես կազմակերպել, վոր կարողանայինք խորտակել դասակարգային թշնամու ընդիմադրությունը : Վերջապես յերկարատեւ, հուսահատ կովից հետո բատրակների արտելը հաղթությունը տարավ այն կուլակների հանդեպ, վորոնք կազմել եյին մեքենաների ընկերություն : Հաղթեց «Բատրակը» : Կոմունիստների և կոմյերիտականների նախաձեռնությամբ 1928 թվի գարնանը կազմակերպվում ե նոր արտել Կալինինի անվան՝ 36 չքավոր տընտեսություններից :

Կուսակցական և կոմյերիտական բջիջները բացատրողական մեծ մասսայական աշխատանք տարան գյուղացիների մեջ և մեքենաների կուլակային ընկերությունը ցըեցին : Ավելի համարձակ սկսեց քայլել բատրակների արտելը և չքավորները ամենից առաջ վաղեցին կոլխոզ : Ամեն կողմից Կրասավկան բոցավովեց կոլեկտիվացման կրակով : 1928 թվի ընթացքում գյուղում կազմակերպվեց ելի յերկու միջակ կուլիող : Վերջապես 1929 թվականի գարնանը կուսակցական և կոմյերիտական բջիջները բոլոր մանր կոլխոզներից, վորոնց գլուխ եր կանդնած «Բատրակը», կազմակերպվեցին մեկ խոչը կոլխոզ : Ամառվա ընթացքում կոլխոզը արագությամբ

աճեց : Զքավորների յետեից մասսայական շարժումն սկսվեց միջակ դյուղացիության մէջ , կոլխոզնիկների համարյա ամեն մի ժողովում ընդունվում եյին 50—80 նոր անդամներ : Կոմյերիտական բջիջը , քննության առնելով կոլխոզի խընդիրը , պարտավորեցրեց բոլոր կոմյերիտականներին կոլխոզ մտնել : Կոմունիստները և կոմյերիտականները հանդիսացան կոլխոզային շինարարության հիմնական նեցուկը :

ԿՈՒԼԱԿԻ ՆՈՐ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԸ

«ԿՈԼԽՈԶԸ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ Ե , ՏՎԵՔ ԿՈՄՈՒՆԱ»

Որեցոր կուլակը կորցնում եր իր աղղեցությունը , ուժեղանում եր նրա դասակարգային ատելությունը կոլխոզի վերաբերմամբ , փոխվում եյին դասակարգային պայքարի ձևերն ու մեթոդները : Յերբ սկսվեց կոլխոզային հախուռն շինարարությունը , կուլակը փոխեց իր պայքարի տակտիկան . կուլակը փորձեց կոլխոզը դասակարգային կովի առարկայից դարձնել սոցիալիստական հողագործության դեմ պայքարելու ասպարեզ : Նա հրապարակ նետեց մի շարք նոր լոգոնդներ՝ — «կոլխոզը — ստրկություն ե , կերթաս այստեղ , քաղցից կսատկես» :

Սակայն դա չողնեց : Կոմունիստները և կոմյերիտականները համառությամբ խմբում եյին բատրակներին և չքավորներին , ամրացնում եյին դաշինքը միջակ դյուղացիության հետ :

Կոլխոզային շինարարության հուժկու հեղեղատի մեջն ընկավ միջակը : Սնանկացած կուլակը փոխեց իր վնասարար կովի մեթոդները : Ոգտվելով չքավոր և միջակ մասսաների տարերային վոգեորությունից՝ դյուղի համատարած կոլխոզի վացման շինարարության գործում , կուլակը հրապարակ իջավ նոր լողունով . «կոլխոզը ամենքի համար ե , տվե՛ք կոմունա» : Յեթե կոլխոզային շինարարության սկզբում կուլակը իր հույսը դրել եր գլխավորապես դյուղացու մանր-բուրժուական սեփականության վրա (ի՞նչպես կարելի յե ընկերանալ կոլխոզում տկլոր մարդկանց հետ , «անդործ-

ների» հետ) , ապա կապիտալիստական տարրերի վրա վճռական ճնշումն (հարկեր , հացամթերումներ) դործ դնելու պայմանների մեջ և , գլխավորապես , ուայնի համատարած կոլխոզի վացման հախուռն կառուցման պայմաններում կուլակը սկսեց աղիտացիա անել «ապագասակարգային» կոլխոզի ողտին : Յեվ դա պատահական բան չեր : Դրանով կուլակն ուղում եր խցկվել կոլխոզի մեջ և ներսից պայմաննել այն :

Կոլխոզային շինարարության դեմ կուլակի պայքարելու նոր տակտիկան հարկավոր ե յերեան հանել կրասավկայի կոլխոզի փորձի վրա : Կրասավկա դյուղի չքավոր-միջակ մասսաները վորոշում կայացրին համատարած կոլխոզի վացման յենթարկելու իրենց ուայոնի գյուղական տնտեսությունը : Կոմունիստները և կոմյերիտականները ժողովուն արած զեկուցումների և դյուղացիների հետ խմբական զրուցյաներ կազմակերպելու միջոցով աղիտացիա մղեցին խոշոր կոլխոզ ստեղծելու համար : Դրանից հետո մի ամսվա ընթացքում կոլխոզի տնտեսությունների թիվը 300-ից բարձրացավ 642-ի : Կուտակցական և կոմյերիտական բջիջները , վորոնք չեյին սպասում նման հոսանք դեպի կոլխոզը , սկզբում իրենց կորցրին . «Ապա ի՞նչ պետք ե անենք դրանց հետ» : Կոլխոզի խորհուրդը դանդաղում եր չքավոր և միջակ տնտեսությունները ընդունել և ընդունում եր հայտարարություններ կուլակներից :

Կոլխոզի զարդացման այդ դժվարությունները և կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների չփոթմունքը ողտագործեց կուլակը և նոր ընդունված կոլխոզների «ցույցը» սարքեց : Մինչդեռ կոմունիստներն և կոմյերիտականները մտածում եյին , թե ինչ անեն , կուլակը մեծ աշխատանք ծալված դյուղացիների մեջ և , գլխավորապես , աշխատանք տարավ կանաց մեջ , գեղջկուհուն դարձնելով հիմնական զենք՝ կոլխոզային շինարարության դեմ վարած իր պայքարում : Ուղիղ յերեք որ անցած այն ժողովց , վորտեղ մի քանի հարյուր տնտեսություններ եյին ընդունվել կոլխոզ , սկսեցին տեղալ մեծ քանակությամբ հայ-

տարարություններ, այս անդամ արդեն կոլխոզից հեռանալու
մասին:

Յերեք որվա մեջ մոտ 250 հայտարարություն եր ստաց-
ված՝ կոլխոզից դուրս գալու մասին: Դուրս ելին գալիս
մեծ մասամբ միջակները: Անհրաժեշտ ե ասել, վոր բոլոր
հայտարարությունները միատեսակ բովանդակություն ունե-
յին, և դրված ելին 4—5 մարդու ձեռքով: Գաղափար
տալու համար բերում ենք բոլոր հայտարարությունների
համար բնորոշ մի քանի հատվածներ:

«Խնդրում եմ վարչությունից հանել ինձ կոլխոզի անդամ-
ների ցուցակից, վորովհետև ընտանիքիս մեջ անհամաձայ-
նություն կա, այսինքն կնոջս և հորս միջև»:

«Խնդրում եմ կալինինի անվան արտելից հանել ինձ ար-
տելի անդամների ցուցակից, վորովհետև իմ և կնոջս մեջ
անհամաձայնություն կա»:

«Հայտնում եմ կոլխոզին, վոր այդտեղ մնալ յես չեմ
կարող, վորովհետև շատ յերեխաներ ունեմ և կինս ել չի
ցանկանում»:

Կուլակը ոգտագործեց կուսակցական և կոմյերիտական
կազմակերպությունների դանդաղկոտությունն ու փորձեց
պայթեցնել կոլխոզային շինարարությունը և պրովակացիայի
առարկա դարձնել կուլեկտիվացման դաշտարք՝ գյուղի չքա-
վոր և միջակ մասսաների մեջ:

Դրա հետ միաժամանակ կուլակը ագիտացիա մղեց՝ ծա-
խելու բանող և կաթնատու-արդյունավոր անասունները:
«Ֆնում ես կոլխոզ, ծախիր անասուններդ ու սերմացուդ:
Այստեղ քեզ մեքենաներ կտան»: Իրենց կանանց և աղջիկների
միջոցով կուլակներն սկսեցին գործել բնակչության կանանց
մասի շրջանում: «Կոլխոզ վոր գնաս, կորցնելու յես զավակ-
ներիդ, հանրայնացնելու են տղամարդկանց, կողպելու յեն
յեկեղեցին» և այլն:

Այդ բոլոր կուլակային հիմարաբանությունները սկզբում
կազմակերպված ընդիմագրություն չեյին գտնում կոմու-
նիստների և կոմյերիտականների կողմից: Յեզ միայն այն
ժամանակ, յերբ սկսեցին մասսայոքին հետանալ կոլխոզից,

կուսակցական և կոմյերիտական բջիջները գլխի ընկան ու
հասկացան իրենց սխալները և յեկան այն յեզրակացության,
վոր թույլ ճնշումն են դործ դրել կուլակի վրա, այնպես
չեն ոգտագործել չքավոր-միջակ մասսաների վոգեորությունը
սոցիալիստական հողագործություն ստեղծելու համար, վոր-
պեսզի կարելի լիներ ոկտել կուլակին ազակուլակացնել:

Կրասավկայում չքավոր-միջակ տնտեսությունների մե-
ծամասնությունը կոլխոզումն է: Կուլակը մահացու հարված
և ստացել: Իրենք, բարակների, չքավորների և միջակների
մասսաները ակտիվ կերպով լիկվիդացիա յեն անում կու-
լակին, վորպես դասակարգի, զրկում են նրան արտադրու-
թյան միջոցներից, հողից, խում են անասունները և շենքերը:
Հին տնտեսության ու կենցաղի ձեռերի տակ ճնշված գեղջկու-
չին հաջողությամբ գլուխ ե բարձրացնում: Որեցոր կնոջ
ակտիվությունը ներքին տնտեսական կյանքի մեջ մեծանում
է: Կրասավկայի գեղջկուհին իր աչքով տեսել ու համոզվել
և խորտակվող կուլակի դասակարգային ատելության մեջ:
Բերում ենք մի հետաքրքիր հատված 50 տարեկան կոլխո-
զային աշխատավորուհու—չքավոր գեղջկուհու՝ դրած նա-
մակից՝ իր աղջկան, վորը աշխատում և Բագվում:

«Սիրելի աղջկիս, շտապում եմ հայտնել քեզ, վոր յետ
կենդանի յեմ և առողջ: Գրեմ մեր կյանքի մասին: Գարնան
սկզբից մենք կոլխոզումն ենք: Ճիշտ և, սկզբում սարսա-
փում եյինք, վոր մենք տկնոր ու քաղցած կմնանք, բայց
բոլորովին հակառակը գուրս յեկավ, մենք կոլխոզում և
կուշտ ենք, և լավ հազնված, յես հիմա մուշտակ և նոր տաք
կոշիկներ ու այլ մանր-մունր բաներ ունեմ: Մեղանում
առանձին տնտեսություններ չկան, ամեն ինչ ընդհանուր ե,
հիմա ավելի լավ ենք ապրում, և ինչպես յերեսում ե, հետո
աշելի լավ կլինի: Մեղանում զպրոց են գնում սովորելունակ
ծերերն ու փոքրերը, յես ել եմ սովորում: Յեկ ահա, ֆենյա,
յես քեզ խորհուրդ եմ տալիս. յեթե ուղում ես, արի այստեղ,
մտիր կոլխոզ, իսկ յեթե չես գա, անպատճառ մտիր կոմ-
յերիտության մեջ և սովորիր գրագիտություն, ան-
պատճառ սովորիր: Մենք դյուլում նոր կյանքով ենք ապ-

բում, կառուցում ենք կոլխոզ, կատարում ենք Լենինի պատգամները։ Մեկ ել, աղջիկս, չկարծես վոր, յեթե աղջիկները դնում են Բագու, ուրեմն այստեղ վատ ե, վո՛չ, վատ չե, այլ վորովհետեւ նրանք կոլխոզում տեղ չունեն, նրանց հայրերին հեռացնում են կոլխոզից և վոշինչ չեն տալիս նրանց, վորովհետեւ նրանք կամ խոչոր ալբանքատարությամբ են պարապում, կամ կուլակներ են, և այժմ թափառում են ամեն կողմ, իսկ դու, Ֆենիչկա, իսկական պրոլետարութի յես...»

Սյդ նամակը բացարձակորեն համոզում ե, վոր այժմ
գեղջկուհիները համատարած կոլեկտիվացման ռայոններում
սկսում են ըմբռնել՝ կոլխոզային շինարարության միջոցով իրենց կյանքը բարելավելու անհրաժեշտությունը, զգացել
են դասակարգային թշնամու ագիտացիայի ամբողջ պատ-
սակարությունը։ Գլխավորն այն ե, վոր խելացի կերպով
կաղմակերպեն կանանց, մասսայական բացատրիչ աշխա-
տանք տանեն գեղջկուհիների մեջ, նրանց մասնակից անեն
կոլխոզի տնտեսության կյանքին։ Կրասավկայում գեղջ-
կուհիների հետ վոչվոք չի պարապել, ուստի բոլորովին պա-
տահական յերեսույթ չի, վոր սկզբում կանայք յենթարկ-
վեցին կուլակային աղիտացիայի ազգեցությանը։ Բավկական
եր, վոր կուսակցական բջջը կանանց մի քանի ժողովներ
կաղմեր կոլխոզային շինարարության վերաբերմամբ և ահա
գեղջկուհիները խելույն մի կողմ շպրտեցին կուլակային
«յերգերը» և անցան կոլխոզային շինարարության ընդհա-
նուր շարքերը։

ԿՅԱՆՔԻՑ ԶՊԵՏՔ Ե ՅԵՍ ՄՆԱԼ

Գյուղը դարձել է յեռուն ծով։ Բատրակների, չքավորների և միջակների մասսաները վոտքի յեն կանգնել վճռական կրիվ մղելու դասակարգային թշնամու դեմ՝ գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։ Կոլխոզյին շինարարությունը ընթանում է մի չտեսնված մասսայական թափով և դրա հետ միաժամանակ վճռական կրիվ մղելու դասակարգային թշնամու սոցիալիստական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։ Կոլխոզյին շինարարությունը ընթանում է մի չտեսնված մասսայական թափով և դրա հետ միաժամանակ վճռական կրիվ մղելու դասակարգային թշնամու սոցիալիստական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։

կանապես իրագործվում է կուլտակին, վորպես դասակարգի, ըստաբարքի յենթարկելու լողունքը։ Զքափորմիջակ անհատական մանր տնտեսություններից Կրասավկայում՝ դասակարգային թշնամու զեմ կատաղի պայքար մղելու պայմաններում՝ կազմակերպվել ե սոցիալիստական տիպի նոր տնտեսական մարմին — համատարած կոլխոզ։ Դրա հետևանքով այլ կերպ զրվեցին տնտեսական և կուլտուրական շինարարության հարցերը, փոխվեցին դասակարգային պայքարի ձևերն ու մեթոդները։ Ինչո՞վ եր պարապում այդ ժամանակ կոմյերիտական քջիջը։ Ի՞նչ ելին անում 32 կոմյերիտականները։

Կոլխազային շինարարության ամենայեռուն ժամանակը
շատ ճիշտ վարվեց կոմյերիտական բջիջը, յերբ պարտավո-
րեցրեց բոլոր կոմյերիտականներին կոլխող մանել: Միաժա-
մանակ բջիջը կոմյերիտականներից կազմեց հարվածային
բրիդագներ, վորոնք մղում եյին խմբական կամ անհատա-
կան աղիտացիա չքավոր և միջակ գյուղացիության մեջ:
Կոմունիստների հետ միասին կոմյերիտական բջիջը անցյալ
տարվա գարնանը հաջողությամբ կաղմակերպեց գյուղի
չքավոր-միջակների մասսայական ցույց՝ կոլեկտիվացման
ըղունքի տակ, կաղմակերպեց մի շարք միտինգներ, զրոյց-
ներ, լրագրների բարձրաձայն ընթերցումն և այլն: Սակայն
բջիջը հատկապես բատրակային և չքավոր յերիտասարդու-
թյան հետ բոլորովին չի պարապել, ժողովներ չի գումարել,
չի քննել նրա հետ միասին կոլխողային շինարարության
հարցերը: Ճիշտ և, բջիջը վերջին վեց ամսվա ընթացքում
գումարել և գյուղական անկուսակցական յերիտասարդու-
թյան մի քանի ժողովներ:

ի՞նչ հարցել դրեց յերիտասարդությունը ժողովներում :

Նոր կենցաղի մասին, Միջազգային Կարմիր Որդվա, ինդուստրացման փոխառության, Միջազգային Յերիտասար-թյան Որդվա, կը ո՞նի, անդրագիտության լիվլիդացիայի մասին։ Հասկանալի յե, վոր այդ հարցերը մեծ նշանակություն ունեն, սակայն ո՞ւր կորան կոլխոզի կազմակերպության հարցերը, ինչո՞ւ բջիջը կոմյերիտականների և բարակա-

«ՌԱՄՍՎԵՏ ԿՈՄՍՈՄՈԼԱ» ԿՈՄՈՒՆԱՆ

Սամոյլովսկի ռայոնի Նովո-Ալեքսանդրովկա գյուղից յերկու կիլոմետր հեռավորության վրա գտնվում է մի շեն, վորտեղ բոլորովին նորերս կազմակերպվել ե կոմյերիտական կոմունա: Այդ կոմունայի պատմությունը նշանավոր է մի խումբ կոմյերիտական բատրակների և չքավորների կատաղի պայքարով ընդդեմ կուլակային բռնության: Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարիներից այնտեղ, վորտեղ հիմա հաջողությամբ ծաղկում-զարգանում ե կոմյերիտական կոմունան, բռն ելին դրել իսկական կուլակները «Հանրապետություն» աշխատավորական արտել ցուցանակի տակ: Մի խումբ կուլակներ «աշխատավորական» արտելի անվան տակ թագնված, անխնա կերպով շահագործում ելին բատրակներին և չքավորներին և նույնիսկ վարկ ելին ստանում, վորպես «օրինակելի կուլտուրական տնտեսություն»:

Իրենց աղղեցությունը կուլակները տարածել ելին գյուղի բոլոր հասարակական կազմակերպությունների վրա: Ավելին կասենք. յերիտասարդ կուլակները լսցիլել ելին կոմյերիտական բջիջը և իրենց ձեռքն ելին առել զեկավարությունը: Մինչև 1928 թվականի վերջը կուլակները ազատ տիրություն ելին անում Նովո-Ալեքսանդրովկա գյուղի ռայոնը. աղղաբնակությունը այնքան ճնշված եր այդ մի խումբ կուլակներից, վոր վոչ վոք չեր համարձակվում տարիների ընթացքում բացարձակապես յելնել դասակարգային թշնամու դեմ:

1929 թվի սկզբին մի քանի ակտիվ բատրակներ և չքավորներ մտան կոմյերիտական բջիջը: Այդ որից բջիջի մեջ սկսվեց կատաղի կոխիլ: Կուլակների տղերքը առանց կովի չելին զիջում բջիջի ղեկավարությունը: Վերջապես կոմյերիտականների, բատրակների և չքավորների համառ պահանջմանը և ռայոնական կոմիտեյի ողնությամբ բջիջի բյուրոն արձակվեց և նրա բոլոր անդամները վոնդվեցին կոմյերիտմիությունից: Ղեկավարության անցան բատրակ-

յին-չքավոր յերիտասարդության ուշադրության կենտրոն չերձրել կոլխոզի տնտեսական կյանքը: Այն ժամանակ, յերբ ամեն մի չքավոր և միջակ գյուղացու, ամեն մի գեղջկուհու ուշքն ու միտքը զբաղված եր այն հարցերով, թե ինչպես լավագույն ձևով կառուցել կոլխոզը, ինչպես կազմակերպել ներքին տնտեսության կյանքը, ինչպես վոչնչացնել կուլակային թշնամի դասակարգը, — այդ ժամանակ կոմյերիտական բջիջը ըստ հնի, գումարում եր ժամանակական հարցերով, յերեկույթներ եր սարքում՝ ներկայացումներով հանդերձ, և բոլորովին մոռացել եր բատրակային ու չքավոր յերիտասարդությունը կազմակերպելու մասին: Բջիջն, ամենից առաջ, չկարողացավ ոգտագործել բատրակային և չքավոր յերիտասարդության ակտիվության նոր թափը: Կոմյերիտական կազմակերպության ստեղծագործող նախաձեռնությունը թույլ եր արտահայտվում նրա ամբողջ աշխատանքի մեջ: Կրասավկայի կոլխոզի ներքին տնտեսական կյանքը շատ պակասություններ ունի, բանող անասուններին վատ խնամելու ղեպքեր ելին նկատվում: Ենությունների մեծ մասը, վորտեղ պահպատ ելին անասունները ձմեռը, տաքացրած չեր: Գյուղատնտեսական ինքննտարը թափթփված եր զանազան տեղերում: Կոմյերիտական բջիջը, վոր պետք ե խորամուխ լիներ կոլխոզի տնտեսական կյանքին, անտարբեր անցնում եր արտադրական հարցերի կողքից:

Մի փոքր շրջադարձ՝ կոլխոզի տնտեսական կյանքի կողմը՝ կոմյերիտական կազմակերպության աշխատանքի մեջ նշվեց այն ժամանակ, յերբ կիրառվեց վերակառուցումը ըստ արտադրական սկզբունքի: Այդ մասին մանրամասն մենք կպատմենք առանձին պլանում, յերբ կխոսենք կոմյերիտական կազմակերպությունների վերակառուցման մասին՝ ըստ արտադրական կազմակերպությունների:

ները և չքալորները : Բջիջը կանգնեց դասակարգային ուղիղ ճանապարհի վրա :

Առաջին գործնական քայլը, վորով զբաղվեց բջիջը, դա կուլակային «Հանրապետություն» արտելի թշնամական եյության մերկացումն եր գյուղի աշխատավորների շրջանում : Առաջին ժողովում կոմյերիտականները ամբողջ գիշեր քընում եին այն հարցը, թե ինչպես ցրեն կուլակային արտելը : Ժողովում վճիռ կայացրին՝ պահանջել ռայտնական կազմակերպություններից լիկվիդացիայի յենթարկել կուլակների կարգածքը : Համառ ու յերկար կովից հետո կոմյերիտականները հաղթեցին — «Հանրապետություն» արտելը ցրել առին : Սակայն դրանով բջիջը ըրավականացավ : Բավական չե հիմուլին քանդել կուլակների բունը, հարկավոր ե չինել մի նոր գործ, վորը կարողանար փոխարինել կուլակային արտելին : Նովո-Ալեքսանդրովկայի կոմյերիտականները կրկնակի յեռանդով աշխատանքի կապան, վորոշակի նպատակ ունենալով կազմակերպել կոմունա :

«Ցույց կտանք գյուղացիներին, վոր «աստվածները չեն շինում կճուճները», — այսպես ելին գատում աշխատանքի համեստ հերոսները — Նովո-Ալեքսանդրովկայի բջիջի կոմյերիտականները :

Մի քանի անգամ ժողովներում կոմյերիտականները քըննեցին կոմունա կազմակերպելու հարցը : Արդելքներ չափազանց շատ կային և ամենադլխավորը — բոլոր կոմյերիտականները ջահել ելին, իսկ նրանց մեջ անկախ տնտեսություններ ունեցողները չկային : Հայրերը վոչ միայն չելին ցանկանում կոմունա մտնել, այլ լոել անգամ չելին ուղրում դրա մասին : Բացի դրանից, նախակին կուլակային կարգաժքում միայն պատերն ելին մնացել . վոչ բանող անասուն կար և վոչ ել դյուղատնտեսական ինդինտար : Մի խոսքով, կոմունան պետք եր կազմակերպել դատարկ տեղում : Չնայած կուլակների կատաղի ընդդիմադրության, հակառակ բոլոր դժվարություններին, կոմունայի կազմակերպու

թյանը նվիրված յերբորդ ժողովում բատրակ-չքավոր յերիտասարդության ներկայությամբ կոմյերիտականները հաստատապես վճռեցին կազմակերպել կոմունան և հենց այդտեղ վճիռ կայացրին, վոր կոմյերիտական չի նա, ով չի մտնի կոմունան : Ժողովում 22 կոմյերիտականներից կոմունա գրպեցին միայն տասն հոգի, մնացածները վախեցան դժվարություններից, սոցիալիստական շինարարության ճակատի դասավալիքներ հանդիսացան : Ժամանակը յեռուն եր, յերկար դատելու հնարավորություն չկար, և մեր կոմունար-կոմյերիտականները արտաքսեցին մեկը մյուսի յետեղից 12 կոմյերիտականներին՝ կոմունան չմտնելու համար : Հենց այդ ժողովում տեղի ունեցավ մի բավական հետաքրքրական դեպք : Յերբ սկսեցին դատել կոմյերիտական Սոտնիկովին, վորը ուրիշների նման չեր կարողացել համոզել հորը, վոր մանի կոմունան, մի քանի կոմյերիտականներ առաջարկեցին, վոր Սոտնիկովին արտաքսեն կոմյերիտմիությունից : Այն ժամանակ Սոտնիկովը ինդրում և միայն 30 բույս ժամանակ, վոր վազե տուն և վերջին անգամ խոսե հոր հետ կոմունայի մասին : Ալեքս . Սոտնիկովը նվիրված կոմյերիտական եր, նա ամբողջ գիշեր խոսում եր ծնողների հետ, աշխատում եր համոզել նրանց՝ կուեկտիվ ճանապարհով գյուղատնտեսությունը դարձանալու անհրաժեշտության մեջ : Ծնողները չհամաձայնվեցին վորդու հետ և կոմունա չմտան՝ Ալեքսեյ Սոտնիկովը մյուս որը վազառավոտյան բաժանվեց իր ծնողներից և իր ունեցածով մտավ կոմյերիտական կոմունան :

Դասակարգային թշնամին թողել եր իր դիրքերը, կոմյերիտականները հաղթեցին, փոքրիկ «Թասսվետ կոմսոմոլա» կոմունան յերկրի յերեսից սրբեց կուլակային կողոպառդ «Հանրապետություն» արտելը :

Կոմյերիտականների հաղթության լուրը կուլակային արտելի վերաբերմամբ արագությամբ տարածվեց ամբողջ Սամոյլովսկի ուայունում : Նովո-Ալեքսանդրովկայի դյուղացիները սկզբում կասկածանքով ելին վերաբերվում կոմյերիտա-



կան կոմունային։ Կոմյերիտականների հետ խոսելիս դյուշացիները ասում եյին։

— Վոչինչ չի դուրս գա, դուք ջահել եք, չեք կարող կառավարել դորձը։

Կոմյերիտականները վճռեցին չընկճվել։

— Յույց տանք, վոր մենք աշխատել կարող ենք։

Այդպէս պատասխանեցին կոմունարները։

Կոմունայի կազմակերպության հետ առաջին որերից կոմյերիտականները լրջորեն զբաղվեցին տնտեսական և կուլտուրական կյանքի հարցերով։ Անսպուններին խնամելու համար առանձնացրին բրիգադներ, վորոնք իրար հետ պիտի մրցեյին։ Տաքացրին շինությունները, նորողեցին դյուզատնտեսական լինվենտարը։ Կազմեցին գյուզատնտեսական աշխատանքների որացույցային պլանը։ Բաժանեցին երենց բանվորական ուժերն այնպես, վոր ամեն մի կոմունար կատարի մի վրոշ աշխատանք։ Կոմունայում անդրագետները սովորում են գրադիտություն, կանոնավոր կերպով շաբաթը մի քանի անգամ պարապում են քաղաքական լուսավորությամբ։ Կոմունարները կազմակերպել են կոլեկտիվ սննդառություն։

Ամբողջ տնտեսական կյանքը ղեկավարում ե խորհուրդը, կոմունայի գլուխ ունենալով կոմյերիտական նախագահ։ Կոմունայի արտադրական և կուլտուրական կյանքի բոլոր հարցերը վճռում ե խորհուրդը, իսկ խոշոր ձեռնարկումները հաստատում ե կոմունարների ժողովը։ Աշխատանքի այդ կարծ ժամանակամիջոցում տասնեմեկ կոմունար-կոմյերիտականներն այնպես կարողացան կազմակերպել իրենց առ սությունը, վոր գյուզացիներն սկսեցին ուշադրությամբ դիտել «Խասսվետ կոմսոմոլա» կոմունան։ Տնտեսական և կուլտուրական կյանքի հմուտ կազմակերպությունը, ընկերական որբնակելի կարգաղահությունը, դասակարգային միությունը և կոմունարների իրենց գործին նվիրված մինել խիստ բարձրացրին կոմյերիտական կոմունայի հեղինակությունը շրջակա գյուղերի գյուղացիների աչքում։ Գյուղացիները սկսեցին այցելել կոմունան և դիտել կոմյե-

րիտականների կարգերը։ Կոմունայի կազմակերպությունից յերկու-յերեք ամիս չանցած ուսյոնի գյուղերում լուրեր տարածվեցին կոմունար-կոմյերիտականների գործերի լավ դրության մասին։

Վատթարագույն թշնամիները—կուլակները—տարածում ենին կոմյերիտական կոմունայի մասին անմիտ լուրեր՝ հուսալով վարկաբեկել աշխատավոր գյուղացիների մեջ կոլեկտիվացման գաղափարը։ Սակայն կոմունար-կոմյերիտականների հայրերը, վորոնք առաջ լսել անդամ չեյին ուզում կոմունայի մասին, այժմ անձամբ համոզվեցին կոլեկտիվ կերպով աշխատելու անհրաժեշտության մեջ։ Վորդիները դլուխ կանգնեցին իրենց հայրերի շարժմանը կոլեկտիվացման գործում։ Կոմյերիտականների յետելից սկսեցին մտնել կոմունան ծերունի գյուղացիները։ Դեռ ևս չեր անցել 5—6 ամիս, սկսեցին տեղալ հայտարարություններ կոմյերիտական կոմունան ընդունվելու համար։ Իրենց կոմյերիտական վոգերությամբ և յեռանդով տնտեսական և կուլտուրական գործերում՝ յերիտասարդ կոմունարները վարակեցին ամենից առաջ բարտակներին և չքափորներին։ Կոմյերիտական կոմունան կանգնեց ուղիղ ճանապարհի վրա, նա որեցոր, ամսե ամիս զարգանում և ամրանում ե։ Հեռու չե այն որը, յերբ փոքրիկ «Խասսվետ կոմսոմոլա» կոմունան կունենա վոչ թե տասնյակներով, այլ հարյուրներով և հազարներով կոմունարներ։

Զահել կոմունարները վոչ միայն հմտորեն կազմակերպեցին կոմունայի արտադրական կյանքը։ Նրանք միենույն ժամանակ հանդիսանում են կուսակցական կազմակերպության լավ ոգնականները՝ գյուղի բոլոր աշխատանքների մեջ։ Բնորոշ ե, վոր չնայելով նովո-Ալեքսանդրովկա գյուղի ուայոնում կուսակցական բջիջի բացակայության, կոմյերիտական բջիջը ծավալել ե մեծ աշխատանք գյուղացիների մեջ։ Կոմյերիտմիության բջիջը ժամանակին իրագործում ե կուսակցության ուայոնական կոմիտեյի և կոմյերիտմիության վորոշումներն ու առաջադրությունները։ Բոլոր կամանիաները, բոլոր կարևորագույն ձեռնարկումները բջիջը կի-

րառում ե հարվածային կարգով։ Կոմյերիտականները կազմում են բրիդաղներ բացատրելու համար գյուղացիներին կոլեկտիվացման, տրակտորների համար կանխավճարներ հավաքելու և ուտիլ-հումուլթ ժողովելու հարցերը։ Կոմյերիտականները կոմունիստների հետ միասին կաղմակերպում են բատրակների և չքավորների ժողովներ։ Իրենց ժողովներում կոմյերիտականները քննում են կոլեկտիվացման, գյուղական խորհրդի աշխատանքի, խնայողությունների յերշաբաթյակի, կոոպերացիային ոգնելու հարցերը և այլն։ Ամեն մի հարցի առթիվ բջիջը կայացնում է գործնական միջցառումներ, վոր և արագությամբ իրագործում ե։ Կոմյերիտական բջիջը սպասարկում է մի շարք գյուղեր, վորտեղ կոմունար կոմյերիտականները կանոնավորապես այցելում են՝ մտնեսական — քաղաքական առաջադրությունները կիրառելու համար։

Երիտասարդ կոմունայի կոմյերիտականները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աշխատանքի իրենց յեռանդով ձեռք են բերել մեծ հեղինակություն շրջակա գյուղացիների մեջ։ Զնայած վոր կարճ միջոց ե անցել իր հիմնվելու որից, «Ռասավետ կոմունոլա» կոմունան քիչ հաջողություններ չունի վորոնց չնորհիվ արդեն հիմա գյուղացիների կողմից սկսվել ե ուժեղանալ կոմունան մտնելու ձգտումը։ «Ռասավետ կոմունոլա» կոմունայի կաղմակերպության պատմությունը մի գեղեցիկ որինակ ե կոմյերիտական ստեղծագործող նախաձեռնության։ Շատ կոմյերիտական բջիջներ պլիտի սովորեն նովո-Ալեքսանդրովկայի կոմյերիտականների փորձից, թե ինչպես պիտի կովել դասակարգային թշնամու դեմ և կառուցել սոցիալիստական հիմքով նոր կոլխոզային գյուղը։

ԿՐԻՈՒՇԱՅԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿՈԼԽՈԶԸ

Կրիուշա գյուղը մինչև կոլխոզի կաղմակերպվելը Բալաշովի ամբողջ շրջանի ամենաաղքատ գյուղն եր։ Գյուղացիների 60%-ը բատրակներ և չքավորներ են. աղքատություն, կատարյալ անդրագիտություն, կեղտոտություն, — ահա

կրիուշացիների բնորոշ հատկությունները։ Տնտեսական առաջին բեկումն ունեցան նրանք 1928 թվի աշնանը։ Այդ տարին առաջին անգամ կրիուշայում տնտեսությունների կեսը մտավ՝ հողը միասին մշակելու ընկերության մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխության 13-րդ ապրիլ սկզբում 302 չքավոր և միջակ տնտեսություններ հոժարակամ ընդունեցին արտելի կանոնադրությունը և նույն տարվա դեկտեմբերին կրիուշացիները կազմակերպեցին կոմունա։ Հենց առաջին տարին կրիուշայի կոլխոզիները յերկու անգամ մեծացրին ցանքսի հրապարակը և յերեք անգամ շատացրին հացահատիկների ընդհանուր բերքը։ Յեթե մինչև կոլխոզը գյուղացիների մեծամասնությունը ապահովված եր լինում հացով մինչև դեկտեմբերի վերջը, այս տարի՝ կոլխոզավնաշխատանքով առաջին անգամ գյուղի պատմության ընթացքում գյուղացիները ապահովված են հացով ամբողջ տարին։

Կրիուշայի կոլխոզը մոտ յերկու տարի յե, վոր գյուղություն ունի։ Այդ ժամանակամիջոցում կոլխոզիները մեծ հաջողություններ են ունեցել։ Կյանքը յեռում ե կոմունայում։ Կրիուշայիք մեծ դպրոց են շինում կոլխոզային յերիտասարդության համար, ավարտում են անասնոցի շինությունը, շինում են աղյուսի գործարան, պատրաստվում են կառուցելու յերկու մեծ շենք՝ կոմունարների հանրակացարանների համար։ Կրիուշայիք կառուցել են մի ընդարձակ շինություն հացահատիկներ չորացնելու համար։ Զեռք են բերել 50 փեթակ, սկսել են մնկել մի այդի 75 հեկտար տարածությամբ։ Կոմունան ունի մի քանի արհեստանոց։ Կաշվեղենի, կարելու, կոշիկների, ատաղձագործական, դարբնոց։ Ունի շինարարների բրիդաղներ կոմունային կից, կտրակտորային կալոննա, վորը սպասարկում ե յերեք կոլխոզը։ Կրիուշայի, Պետքանի և Կամենսկիյի, կալոննան բաղկացած ե 79 տրակտորից, 84 նորագույն տեսակի գութաններից, 370 ցագաններից և 25 ցանիչներից։ Տրակտորացին դասընթացներում սովորում են մոտ 200 մարդ։ Առաջիկա գաշտային աշխատանքներին չի լինելու և վոչ մի կոմյերիտական (տղա թե աղջիկ), վոր չկարողանա աշխատել

տրակտորի վրա։ Անցյալ ամառը կոլխոզում կար մսուր, մանկական հրապարակ, հասարակական փուլ, իսկ դաշտում, աշխատանքի ժամանակ ընդհանուր սննդառություն։

Կոմունայի տնտեսական կյանքում կան «բայեր», վոր սիտի հաղթահարել։ Սակայն չնայելով դրան, կոմունան զարդանում ե, նրա տնտեսական կազմը ամրանում ե, կոմունալները համառությամբ հաղթում են արդելքները, ստեղծելով նոր, կոլխոզային, լուսավոր կյանք։ Մինչև այս տարի կրիուչայի ազգաբնակության 70%-ը անդրագետ եր։ Միայն այժմ, կոլեկտիվ աշխատանքի պայմաններում կրիուչացիները հնարավորություն են ստացել սովորելու։ Կոմունայում աշխատում են անդրադիտության վերացման յերեք կետեր, 330 կոմունարներ համառությամբ, որեցոր սովորում են գրադիտություն։ Դրանց կեսից ավելին կանայք են։ Պարագում են փոխեփոխ, սովորում են մեծ վոգեռությամբ ու համառորեն։ 11 ամյա պիոներ Նինա Նատալիչկան պատմել ե մեզ, թե ինչպես իր հիսուն տարեկան մայրը սովորում ե գրադիտություն։

— Ե՛, ի՞նչպես ե սովորում մայրիկո, հասկանո՞ւմ ե մի բան, — հարցնում ենք Նինային։

— Արդեն դիտե դրել և կարդալ, — հաղթական յեղաւնակով պատասխանում ե Նինան, պարծենալով մոր համար։ — Ո՛յ, թվարանական խնդիրները լավ չե լուծում, դժվար ե հասկանում, յես ամեն յերեկո սովորեցնում եմ նրան։

Ամեն յերեկո պառավ մոր և յերեխայի գլուխները խռոնարհում են գրքի վրա, պիոներ — աղջիկը թվարանություն ե սովորեցնում իր պառավ մորը։ Կրիուչայում գործում ե կուսակցական դպրոց, վորտեղ պարապում են կոմունիստները, կոմյերիտականները և 15 անկուսակցական կոմունարներ։

1929 թ. սեպտեմբերին մի յերեկո չքավորների ժողովը միաձայն վճիռ ե կայացնում կողպել յեկեղեցին («Ինչների՞ն և պետք Ակումբ դարձնենք»)։ Կոլխոզների ընդհանուր ժողովը ևս նույն վճիռն ե կայացնում։ Կողպել հայն

չին որը կոմունարները նախկին յեկեղեցում կազմակերպում են «կարմիր հարսանիք», ամուսնացնում են մի կոմյերիտականի, հետո լսում են նոր կենցաղի մասին զեկուցումն, նվազում ե լարային որկեստրը, ջահելմերը պարում են, յերգում են։ Կուլակները վանդակի մեջ դցած գիշատիչ գաղաների նման մռնչում եյին։ Ժամի 11-ին կոլխոզի աշխուսի գործարանում հրդեհ ծագեց։ Բայց կուլակներին չհաջողվեց հարամ անել կոլխոզի տոնը։ Խուճապ առաջ չեկավ, հրդեհը շատ չուտ հանգըրին։ Իսկ նոր ակումբում ամեն ինչ գնում եր իր կարգով, գարմոնիան ուրախ-ուրախ հնչում եր, կոմունարները խմբովին ուրախանում եյին։ Նորերս կրիուչայի յեկել «Կրասնիյ Պուտիլովեց» գործարանից բանվորական պատգամավորություն։ Կրիուչայի կոմունարների և չեֆ-բանվորների կապի յերեկոն կայացավ «յեկեղեցում», ուր փայլում եյին կարմիր պլակատները — «Խոչոր կոլխոզի միջոցով դեպի սոցիալիզմ», «Աստված հարկավոր և հարուստներին՝ աշխատավորներին ստրկացնելու համար»։ Այդ որը կրիուչացիների հիշողության մեջ յերկար ժամանակ անմուանալի կմնա, վորպես տոն հսկա գործարանի՝ «Կրասնիյ Պուտիլովեց»-ի բանվորների ոլրութետարական կապի։ Կրիուչայի կոմունարների անունից վողջունեց չեֆ-բանվորներին հին կոմունարուհի Ալեքսանդրա Վերսունինան։ Նա մանրամասն պատմեց այն մեծամեծ դժվարությունների մասին, վորոնց հաղթահարել են կոլխոզներին կուլակի դեմ վարած վերջնական պայքարում։ Վերսունինան իր ճառը վերջացրեց այսպես։ «Յես այժմ վերածնվել եմ։ Յեվ վոչ միայն յես, այլ մենք բոլորս, մեր բոլոր գյուղերը, ամբողջ յերկիրը վերածնվում ե։ Դուք ուշադրություն մի դարձրեք, վոր յես դեմքով ծեր եմ։ զրա փոխարեն սիրութ ջահել ե։ Յես այժմ պառավ չեմ, յես — կոմսոմոլիկա յեմ»։

Կոլխոզում զտումն կատարվեց, 12 կուլակներ արտաքսվեցին։ Սամոյլովսկի ամբողջ ուայոնի կուլակները աշխատում են անվանարկել կոմունան, տարածելով ամենանմիտ լուրեր, վորպես թե կրուշայի կոմունիստների յերեխաների վրա բռնում են շան ականջներ և այլն։ Իսկ ուայոնի գյու-

դերում խրճիթից խրճիթ եր անցնում մի յենթակուլակ կի՞ն, վորին կուլակները հազցրել եյին մուրացիկի շորեր։ Նա ցույց եր տալիս իր ցնցոտիները, դառնապես արտասվում եր և պատմում։

— Յես Կրիուշայի կոլխողումն եյի, և ահա ինձ ինչ որն են գցել։

Կուլակային զրպարտությունները ցնդում են սապոնի պղպջակների պես։ Կրիուշայի կոմունան վոչ միայն ուայոնում, այլ և ամբողջ շրջանում համարվում ե լավագույն, որինակելի կոմունա։ Բոլորովին պատահական յերկույթ չի, վոր համարյա ամեն որ Կրիուշա յեն դալիս տասնյակ կիլոմետր հեռավորությունից գյուղացիների և գեղջկուհիների պատգամավորություններ՝ ծանոթանալու կոմունայի տնտեսական կարգերին և սովորելու այնտեղ։ Շատ գեղքեր են յեղել, յերբ գյուղացիները և գեղջկուհիները Կրիուշայի կոմունային ծանոթանալուց հետո վերադարձել են իրենց գյուղը և նույն որը, իրենց տեսածի մասին զեկուցումն տալուց հետո, կազմակերպել են կոլխոզ։

Այսուղի, Կրիուշա յեն յեկել անցյալ տարի նսկ արտասահման ժուրնալիստները։ Կրիուշայի կոմյերիտական բջիջը փոքր ե և նոր։ Նա ծնունդ և ստացել կոլխոզի հետ միասին։ Դեռ մինչև այժմ բջիջը չի խորացել կոլխոզի տընտեսության աշխատանքի մեջ։ Նա ավելի շատ պարտապում եր կուլտուրական հարցերով։ անդրագիտության վերացումն, յերեկույթների կազմակերպություն և այլն։ Ճիշտ ե, վերջին ժամանակ բջիջը ընդհուպ մոտեցել և տրակտորիստների կաղըեր պատրաստելու գործին։ Բջիջը արդեն սկսել է քննության առնել գարնան գյուղատնտեսական կամպանիայի արտօդրական պլանը։ Սակայն բջիջի տեսակարար կշուր դեռ ևս մեծ չե կոմունայում։ Կոմյերիտական ները մեծ աշխատանք պիտի գործ դնեն յերիտասարդության աշխատանքի կազմակերպման, սոցիալիստական մըրցության ծավալման, յերիտասարդներից հարվածային բրիդադներ կազմելու գործում՝ դաշտային և բերքահավաքի աշխատանքների միջոցին։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՐՁԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Ամենհիվանդու տեղը կոլխոզների մեծամասնության համար՝ ներքին տնտեսական կյանքի կանոնավոր գրութիւն, մանավանդ, աշխատանքի կազմակերպման հարցերն են կոլխոզներում։ Այս խնդրում լիակատար պարզություն չկա և հաճախ գերակշռում են կուստար միջոցները։ Շատ կոլխոզներում, վորոնք յերենն միենույն ուայոնումն են դանվում, աշխատանքը զանազան տեսակ ե կազմակերպված։ Առանձնապես պետք ե նշել ստորին կոլխոզային և կոմյերիտական կազմակերպությունների մոլորվածությունը յերիտասարդության և յերեխաների աշխատանքը կազմակերպման հարցում՝ կոլեկտիվ տնտեսությունների մեջ։

Թե ինչպես ե կազմակերպված աշխատանքը մի քանի կոլխոզներում, ինչպես են մասնակցել ջահելները և յերեխաները տնտեսական-արտադրական կյանքին, այդ մասին մենք կպատմենք ներքին-Վոլգյան շրջանի յերեք կոլխոզների փորձի հիման վրա։

Բալաշովի շրջանի Սամոյլովսկիյ ուայոնի Կրասավկայի կոլխոզում բոլոր գարնանային և ամառվա դաշտային աշխատանքները յերեք մասի յեն բաժանված։ Հերկումն, բերքահավաք և կալսումն։ Հիշած աշխատանքները կատարելու համար սահմանված ամեն ժամանակամիջոցում, կոլխոզի վարչությունը կազմել ե գյուղատնտեսական աշխատանքների պլանը և դրա համաձայն բաժանել ե բանվորական ուժը։ Դրա հետ միաժամանակ սահմանված ե ճշակման նորմաներ՝ գյուղատնտեսական գլխավոր ուայոններում։ Որինակ, հերկման ժամանակ հետևյալ նորման ե սահմանված մի որվա համար — մի հեկտար վեց ձիանոց մի գութանի համար և չորս հեկտար տասուժանոց տրակտորի համար։ Բերքը դաշտերից հավաքելու ժամանակ 3 մարդուց բաղկացած ամեն մի բրիդադ (3 հնձլոր) պետք ե հավաքեն 4 հեկտարից։ Կալսելու ժամանակ ութ մարդուց բաղկացած ամեն

մի բրիգադ, ունենալով մի կալսող մեքենա, պարտավոր և կալսել որական 100 ցենտներ հացահատիկ։ Դաշտային մնացած աշխատանքները նորմավորված չելին, այլ կատարվում ելին մեծ մասամբ որահաշվով, իսկ աշխատանքների մի մասը (որինակ, քաղհանքը)՝ պայմանավորման կարգով։

Այդ կոլխոզում չափահասների ու յերիտասարդների հետ միասին գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցում ելին դեռահասներն ու յերեխաները։ Հարկավոր են կատել, վոր կոմյերիտականներն ու յերիտասարդությունը կատարում ելին հիմնական արտադրական աշխատանքները։ Այսպես, որինակ, հողի գարնանային մշակությունը կատարում ելին գլխավորապես ջահելները, 15 տարեկանից մինչև 22 տարեկանները։ Բերքահավաքի ժամանակ 8-ից մինչև 14 տարեկան յերեխաներն ու դեռահասները խուզեն ելին բերում, ողնում ելին մեծերին կալսելու ժամանակ և այլն։

Կրասավկայի կոլխոզում աշխատավարձը սահմանված ելույթի ըստ կարգերի ցանցի (ինչպես մի քանի կոլխոզներում), այլ կատարած աշխատանքի վորակի համաձայն։ Գարնանային գյուղատնտեսական կամպանիայի ժամանակ բոլոր տղամարդիկ դաշտային աշխատանքների համար ստանում ելին մի ոռուբլի որական, իսկ վորակյալ աշխատավորները (տրակտորիստները, բրիգադիրները և այլն) 25% ավելի։

Հարվածային կամպանիայի ժամանակ (քաղհան, հունձ, կալսումն) տղամարդիկ ստանում ելին 80 կոպեկ։ Բնորոշ են, վոր տղամարդկանց աշխատանքի զնահատման իջեցման համեմատական չափով իջեցվում եր նաև կանանց աշխատավարձը։ Խուրծ կալսելու համար կանայք ստանում ելին 80 կոպեկ, իսկ կալսելու համար միայն 60 կոպեկ։ 14-ից մինչև 16 տարեկան դեռահասները քաղհանի համար ստանում ելին 40 կոպեկ, իսկ բերքահավաքի աշխատանքների համար — կանանց հավասար վարձ։

Նույն ուսուն կրիուշայի կոլխոզում բոլոր դաշտային աշխատանքները բաժանված են վեց կարգի։ Առաջին կարգը հավասար է 20 կոպեկի, յերկրորդը — 40 կ., յերրորդը — 60 կ.,

չորրորդը — 80 կ., հինգերորդը — 1 ռ. և վեցերորդը — 1 ռ. 20 կ.։ Կար և յոթերորդ կարգ, վոր կիրառվում եր միայն կալսելու ժամանակ։

Հետաքրքիր են, վոր առաջին կարգով վարձատրվում ելին բացառապես գեռահասները, 12-ից մինչև 14 տարեկան, իսկ սկսած 14 տարեկանից նրանք իրենց կատարած աշխատանքով հավասարեցվում ելին հասակավոր կոլխոզներին։ Այդ կոլխոզում բոլոր աշխատանքները, բացի քաղհանից և խուրծեր կապելուց, նորմավորված են և կատարվում են պայմանավորման կարգով։

Վերջապես վերցնենք կուպակսկիյ կոլխոզը, վորը գըտնվում են Խոսկյորսկի շրջանի Նովո-Նիկոլաևսկի ուսունում։ Փետք ե ասել, վոր կուպակում ամառը վոչ թե արտել եր, այլ հողը միասին մշակելու ընկերություն և ուրեմն արտադրության միջոցներն ու բանող անասունները հանրայնացված չելին։ Կուպակի կոլխոզում աշխատանքը վարձատրվում եր հետեւյալ սկզբունքով։ տղամարդը ստանում եր որական 1 ռ. և ճիռը համար 2 ռ. 50 կ., կինը — 70 կոպ. և դեռահասը՝ 60 կոպ.։ Խոտննիք ժամանակ ամեն մի հեկտարից — 2 ռ., փոցիսելը՝ 60 կոպեկ, դիզելը՝ 1 ռ. որական և խոտ բառնալը՝ 1 ռ. 50 կ.։ Բերքահավաքի ժամանակ տրակտորի յետեւից խուրծկապիչները քարշ տալու համար տղամարդիկ ստանում են որական 1 ռ. 50 կ., կանայք — 1 ռ. և դեռահասները — 80 կոպեկ։ Կալսելու ժամանակ կալսելու մեքենայի թմբուկին խուրծ տվողը որական ստանում ե 2 ռ. 50 կ., իսկ նույն մեքենայի տախտակամածին խուրծ տվողը — 1 ռ. 50 կ.։ Հարդը հավաքելու համար տղամարդը ստանում ե 1 ռ. 50 կ., իսկ կանայք — 1 ռուբլի։ Տեխնիկական կուլտուրաների քաղհանի համար տղամարդուն տալիս են 1 ռուբլի, կանանց — 70 կոպ. և դեռահասներին — 60 կոպ.։

Այդ բոլոր կոլխոզներում բանվորական որի տեսողությունը ինչպես տղամարդկանց և կանանց, նույնպես և դեռահասների ու յերեխաների համար սահմանված եր որական 10-ից մինչև 12 ժամ։

Ի՞նչ յեզրակացությունների պիտի հանդենք։ Նախ՝ այդ կոլխողներից և վոչ մեկում կանոնավորապես կազմակերպված չեն աշխատանքը և նրա վարձատրությունը։ Բոլոր յերեք կոլխողներում ել խախտված ե սոցիալիստական աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքը — հավասար աշխատանքին հավասար վարձ։ Յեզ, յերկրորդ՝ վոչ վոք չվ զբաղվել դեռահասների և յերեխաների աշխատանքի համաշաբ կազմակերպությամբ։ Հետեաբար, յեթե Կրասովկայի կոլխոզում հմտորեն են մոտեցել գյուղատնտեսական հիմնական աշխատանքների նորմավորմանը, սակայն չի յեզել աշխատանքի կանոնավոր հատուցումն։ Կրիուշայի կոլխոզում վերցված ե կանոնավոր գիծ՝ տարիքների վերածելու բոլոր գյուղատնտեսական աշխատանքները և կիրառելու պայմանական աշխատանքը, բայց միաժամանակ յերեան և գալիս մեծ տարբերություն դնահատումների վեցկարգյա ցանցում (առաջին կարգը 20 կ; վեցերորդը — 1 ո. 20 կ.)։

Կուպակեի կոլխոզում աշխատանքի կազմակերպման և նրա վարձի մեջ անպայման տեղի յե ունեցել դասակարգային գծի աղավաղումն, վորովհետև այնպիսի դներ են յեղել նշանակված, վոր ազգաբնակության ունեոր մասը, ունենալով արտադրության միջոցներ և բանող անասուն, վաստակել և դաշտային և բերքահավաքի աշխատանքների արժեքի կիսից ալելին։ Պատահական յերեւույթ չե, վոր չնորհիվ կոլխոզի ղեկավարների քյալագյողությանը, տնտեսական տարվա վերջում այդ տեսակ կարգերը հասցը են կոլխոզին ավելի քան հինգ հազար ռուբլու միաս։

Անհրաժեշտ են չել, վոր մի շարք կոլխոզներում փորձեր են յեղել կազմակերպելու հարվածային բրիգադներ և ծավալելու սոցիալիստական մրցություն։ Կրասավկայի կոլխոզում կալսելու ժամանակ մի շարք հարվածային բրիգադներ ստեղծվեցին, վորոնք կարողացան բավականաչափ բարձրացնել մշակույթի նորման։ Յեթե վորպես կանոն, մի մեջենան որական մշակում եր 76—80 ցենտներ, ապա հարվածային բրիգադները նույն պայմաններում և նույնպիսի մի մեջենայով մշակում ելին որական 90-ից մինչև 160 ցենտ-

ներ։ Կոլխոզի վարչությունը վարձատրում եր այդ բրիգադները և այդպիսով խթան եր հանդիսանում բացատրելու աշխատանքի արտադրողականությունը։

Հարվածային բրիգադների փորձը դաշտային և բերքահավաքի աշխատանքների մեջ կոլխոզում ամեն կերպ պետք է ոգտագործել ընթացիկ տարվա գյուղատնտեսական կամպանիայի ժամանակ։ Մանավանդ կոմյերիտական բջիջները պետք է նախաձեռնեն սոցիալիստական մրցությունը կոլխոզային դաշտերում։ Կոմյերիտականները մինչև այժմ շատ թույլ մասնակցություն ունեն կոլխոզների արտադրական կյանքում։ Մի քանի կոլխոզներում կոմյերիտականները վոչ միայն չեն հանդիսացել նախաձեռնողներ հարվածային շարժման գործում, այլ, ընդհակառակն, խանդարել են սոցալիստական մրցության զարգացմանը։ Կուպակեի կոլխոզում կոմյերիտականները հրաժարվել են տրակտորի վրա աշխատելուց, պահանջելով ավելացնել աշխատավարձը, և յերբ ստիպված սկսեցին աշխատել, հաճախ արակտորների աշխատանքների մեջ ընդհատումներ ելին թույլ տալիս։ «Պամյա Բեվոլյուցիի» կոմունայում կազմակերպվեց հարվածային բրիգադ, բայց ցրվեց, վորովհետև կոմյերիտականները չմտան բրիգադը։

Հարկավոր և ձգտել հասնել այն վիճակին, վոր կոմյերիտմիության ամեն մի բջիջ դառնա հարվածային բրիգադ, ձեռներեց լինի սոցիալիստական մրցությանը՝ կոլխոզներում։

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Հինգ տարի սրանից առաջ Խոպյորսկիյ շրջանի Դվոյնովու գյուղում կայծակի արագությամբ լուր տարածվեց՝ «աշխարհի վերջն ե»։

Կոլխակային-տերտերական ագիտարոպի նշանակած որը բոլոր գյուղացիները հաղորդվեցին տեղական յեկեղեցում։ Գյուղական խորհրդի նախագահը և քարտուղարը, վախեցած տերտերական առասպելներից, առաջուց դադարներ

ելին պատրաստել իրենց համար և այդ որհասական որի յերեկոյան, չսպասելով աշխարհի ահեղ դատաստանին, հառաջելով մտան դադաղի մեջ և հրամայեցին կափարիչը ծածկել: Աշխարհի վերջը իհարկե չեկալ, նախագահը և քարտուղարը վողջ-առողջ դուրս յեկան դադաղից, բայց առմիշտ թաղեցին իրենց հեղինակությունը ազգաբնակության աչքում:

Շատ ժամանակ է անցել այդ որվանից: Այժմ Դվոյնովով գյուղը անձանաչելի յե դարձել: Հինգ տարվա մեջ նա վերածնվել է: Գյուղացիները կազմակերպել են «Լենինյան ուղի» անունով մի խոցոր կոլխոզ, վորը միացնում է 1.200 գյուղացիական տնտեսություններ: Դասակարգային սուր պայքարի պայմաններում կոլխոզնիկները հաջողությամբ վերակառուցում են գյուղական տնտեսությունը սոցիալիստական հիմքի վրա: Կուլակը կատաղությամբ ընդգիրանում է սոցիալիստական շինարարությանը: Բացի կոլխոզի շուրջը մղած պայքարից, կուլակը աշխատում է անց կենալ կոլխոզ և գա դարձնել դասակարգային կովի ասպարեզ: Պատահական բան չե ամեննին, վոր «Լենինյան ուղի» կուխողում կային մի խումբ կուլակներ, վորոնք ուղում եյին ներսից պայթեցնել կոլխոզը: Ճիշտ ե, կոլխոզնիկները զգալով դասակարգային թշնամու վնասարար գործնեյությունը, վճռեցին աղատվել դասակարգորեն խորթ տարրերից, նաև ոգտագործել զտումը՝ ստուգելու համար իրենց շարքերի դասակարգային մարտունակությունը: Այս տարվա հունվարին ընտրվեց չքավորներից մի հանձնաժողովը կոլխոզի գտման համար: Հանձնաժողովի յերկարատե աշխատանքից հետո հրավիրվեց կոլխոզնիկների ընդհանուր ժողովը: Այդ օրը անից տուն, կոլխոզնիկից կոլխոզնիկներին հայտնվում եր, վոր պիտի կայանա հաշվետվություն կոլխոզի գտման մասին: Ավելի քան 300 կոլխոզնիկներ հավաքվել եյին քննելու զտման արդյունքները: Կոլխոզի զտման հանձնաժողովի նախագահը, վորը կոլխոզի հնագույն կազմակերպիչներից մեկն ե, հասկանալի կերպով բացատրում է կոլխոզնիկներին՝ նրանց շարքերի հիմնական

ստուգման հետևանքները: Բացառիկ ուշադրությամբ լուսվ են կոլխոզնիկները զեկուցումը, ամեն մի խոսքը քննում: Չե՞ վոր նրանցից յուրաքանչյուրը խոչըր կոլեկտիվ տընտեսության տերերից մեկն ե:

— Ընկերներ, հանձնաժողովը առաջարկում է հանել կոլխոզից... — և նախագահը կարդում է տասներկու կուլակների ցուցակը. ժողովը միաձայն և առանց խոսելու արտաքում է այդ մի դյուժին պարագիտներին կոլխոզից:

— Իսկ այժմ յեկեք քննենք նրանց արարքները, վորոնք պարել են կուլակների ցուռնայով: Վերցնենք Ակիմ Արխիպովին: Նա չքավոր ե, բայց կոլխոզ մտնելուց առաջ պարագել ե սպեկուլյացիայով, աղել ե ցորենը և ալյուրը ծախել ե թանգ գնով: Մինչեւ իսկ մի անգամ իր հարեան-ների մեջ ազիտացիա յե մղել կոլխոզի դեմ:

Դահլիճում լսվում են բացականչություններ:

— Ե՛խ, Ակիմ Վասիլեկիչ, ի՞նչ որի յես հասել դու:

Հանձնաժողովը առաջարկում է պայմանական ձեռվ քաղաքացի Արխիպովին մի տարով հեռացնել կոլխոզից:

— Դրուատ ե, — համաձայնվում են կոլխոզնիկները: Կզգա իր սխալը և կուղղվի:

— Հետեւյալը Արխիպով Դանիլն ե, ունեոր միջակ, մեղադրվում ե նրանում, վոր կուլակների հիմարաբանությունների աղղեցության տակ կանանց մեջ ագիտացիա յե կատարել տրակտորների գեմ: Նա ասել ե.

— Մեզ տրակտորներ հարկավոր չեն: Ապրել ենք առանց նրանց և ելի կամրենք:

Կանչում են Դանիլին նախագահության սեղանի մոտ և խնդրում են մանրամասն պատմել իր արարքների մասին:

— Մեղավոր եմ, — բացատրում ե Արխիպովը, — Անուս մարդ եմ, դրա համար ել դեմ եմ յեղել տրակտորին: Իսկ այժմ գիտակցում են իմ հանցանքը:

Ժողովը վորոշում է խիստ նկատողություն անել Դանիլ Արխիպովին և աչալուր հետեւ, վոր յեթե նա կրկնի նման մի քայլ, — անմիջապես հեռացնել կոլխոզից: Արխիպովից հետո հանդես ե գալիս չքավոր-կոլխոզնիկ Ալեքսեյը:

Նրան մեղադրում են, վոր մի խումբ գյուղացիների հետ խոսելու ժամանակ դեմ ե յեղել կոլխոզին:

— Այո, — խոստովանում ե Ալեքսեևը, — խոսել եմ կոլխոզի դեմ, բայց վոչ չար մտքով: Խոստավանում եմ իմ սխալը, այժմ յես ամբողջ կյանքս կտամ կոլխոզի համար:

— Հանդիմանել նրան, — առաջարկում ե մի ջահել կոլխոզիկ, — վորպեսզի մյուսները խրատվեն:

Ժողովը հանդիմանության վճիռ ե կայացնում Ալեքսեի համար: Հետեւյալը — Վ. Ս. Ալիֆանովը ե: Նրան մեղադրում են, վոր կոլխոզում գտնվելով հանդերձ, խեղդել ե գետի մեջ իր ձիուն:

Ի՞նչպես ե խեղդել, ի՞նչ պայմաններում, թո՛ղ Վասիլի Ստեպանովիչը մանրամասն բացատրի:

Սեղանին մոտենում ե մոտ հիսուն տարեկան մի գյուղացի:

— Քաղաքացիներ, անկեղծորեն խոստովանում եմ, վոր աշխանը գետակի մեջ խեղդել եմ ձիուս: Վերադառնում եյի բազարից, քիչ հարբած եյի: Մեղքս գիտակցում եմ և ուզում եմ ուղղել սխալս ձեր առաջ:

— Թողնել կոլխոզում, բայց պարտավորեցնել, վոր մի ձի առնի, — վճռում են կոլխոզիկները:

Ալիֆանովին փոխարինում ե Անդրեյ Դիբինը: Սա կոլխոզ մտնելուց առաջ ծախել ե յերկու յեղ: Դիբինը սովորական կոլխոզիկ չե, նա յեղել ե վարչության անդամ, ղեկավարել ե «Լենինյան Ուղի» կոլխոզի տնտեսական կյանքը, ուստի զարմանալի չե, վոր Դիբինի արարքը զայրացրել ե կոլխոզիկներին: Վեճարանությունը սկսվում ե Դարյա Ալիֆանովայի ճառով: Նա ասում ե, վոր յերբ Անդրեյ Դիբինը վարչության անդամ եր, ագիտացիա յեր անում կանանց մեջ, վոր նրանք կոլխոզ մտնեն, իսկ ինքն այդ ժամանակ ծախծիում եր իր անասունները և մինչև իսկ այլեց իր կալատեղը: Կոլխոզիկները պահանջում են, վոր Անդրեյը ամեն ինչ կարգին պատմի: Դիբինը աշխատում ե արդարանալ.

— Քաղաքացիներ, անասունները յես ծախել եմ տունս

շինելու համար, իսկ հարդը այրվել ե անզգուշությունից: Հարկավոր եր ցորենը կալսել, և յես տրակտորը գրեցի հարդի վրա, և յերբ սկսեցին տրակտորը վառել, հարդն ել վառվեց:

Կոլխոզնիկները կայացնում են հաստատ վճիռ: պարտավորեցնել Դիբինին մտցնելու կոլխոզի անբաժանելի դրամագլխի մեջ 200 ոռութիւն:

Դրանից հետո կոլխոզնիկների ուշադրությունը կենտրոնանում ե ուներ գյուղացի իվանովի վրա: Այդ քաղաքացին կոլխոզ մտնելուց առաջ ծախել ե իր յեղները: Կոլխոզնիկները հարցնում են նրան.

— Ինչո՞ւ յես ծախել յեղները: Զլինի՞ ուզում ե յիր պրուետար դառնալ կոլխոզ մտնելուց առաջ: Ինչո՞ւ յես ծախել դութանդ և սահնակներդ:

Վեճարանությանը մասնակցող կոլխոզնիկները հարցը այսպես են զնում: Կամ իվանովը իսկույն պիտի մտցնի կոլխոզ 250 ոռութիւն և կամ արտաքսել նրան կոլխոզից: Իվանովը համաձայնվում ե մտցնել 250 ոռութիւն: Հետո քննում են Նիկուլինին, Պետրովին, Ժուրավլյովին և ուրիշներին: Ամենքին վերաբերում են ուշադրությամբ, զգուշությամբ, ստուգում են նրանց նվիրված մինելը կոլխոզին: Ցել այսպես այդ որը մեկը մյուսի յետից ժողովի առաջով անցան 50-ից ավելի կոլխոզնիկներ: Ժողովը տեսեց յերեկոյան ժամի 6-ից մինչև առավոտյան ժամի 5-ը: Այդ որը «Լենինյան ուղի» կոլխոզի բոլոր անդամները զբաղված եյին բացառապես իրենց շարքերի ստուգությամբ: Միայն բոլորովին չեր լսվում կոմյերիտմիության թիջին ձայնը: Այն ժամանակ, յերբ կոլխոզնիկները ամբողջ գիշերը մաքրում եյին կոլխոզը կուլակներից, ստուգում եյին կոլխոզի անդամների գասակարգային մարտունակությունը, — կոմյերիտականները, թեև այդ գիտեյին, բայց զնացել եյին հարեւան խրճիթը ներկայացում սարքելու: Կոմյերիտական բջիջը թերագնահատել ե կոլխոզի զտման կարևորությունը: Այդ փաստը համոզիչ կերպով աղղարարում ե կոմյերիտա-

կան բջիջի վորոշ թուլության մասին՝ դասակարգային աչա-
լըջության մեջ:

Զնայելով վոր Դվոյնովի բջիջը ակտիվ մասնակցու-
թյուն ունի կոլխոզի տնտեսության հարցերում (տրակտո-
րիստներ պատրաստել, ձմեռվա հերկումն և այլն), —
դասակարգային թշնամու հետ ունեցած սուր ընդհարման
մոմենտում կոմյերիտականները վո՞չ պատահաբար գերա-
դասել են ներկայացումը՝ իրենց շարքերի դասակարգային
ստուգումից:

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ — ՏՐԱԿՏՈՐԻ ՎՐԱ

ԱՂՋԻԿՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՆ

«ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ»

Զարգանում և ամրանում են կոլխոզները: Շինվում են
մեքենա-տրակտորային կայաններ և տրակտորային շա-
րաններ: Հակայական պահանջ և ծագում տեխնիկական կաղ-
րերի՝ սոցիալիստական հողագործության համար: Գյու-
ղատնտեսական տեխնիկական միավի բարձրագույն և միջին
կրթական հաստատությունները դեռ յերկար ժամանակ
հնար չեն ունենալու լրիվ բավարարելու կոլխոզները տեխ-
նիկական կաղրերով:

Այս պատճառով տեղերում կազմակեպում են բազմա-
թիվ ժամանակավոր դասընթացներ տրակտորիստներ պատ-
րաստելու համար: Հասկանալի յէ, վոր 1—2 ամսվա դաս-
ընթացները ապադայում անկարող են լինելու բավարարելու
կոլխոզների պահանջը տրակտորիստների կաղրերի վե-
րաբերմամբ: Սակայն այժմ տրակտորիստների դասընթաց-
ները անհրաժեշտ են ամենից առաջ նրա համար, վոր նրանք
հնարավորություն են տալիս կոլխոզներին պատրաստելու՝
դեկը վարող տրակտորիստներ՝ սպասարկելու յեղած տրակ-
տորները: Համատարած կոլեկտիվացման շատ սայններում
արդեն այս տարի կազմակերպվել են դասընթացներ հենց խռ-
չոր կոլխոզներում և այդ հնարավորություն ե տվել կապել

ծրագրի տեսական մասը տրակտորիստների գործնական աշ-
խատանքի հետ կոլխոզային դաշտերում:

Համառոտակի պատմենք համատարած կոլեկտիվաց-
ման Սամոյլովսկիյ ռայոնում դտնվող Պեսչանսկու կոլ-
խոզի տրակտորիստներ պատրաստելու փորձի մասին: Այդ
կոլխոզում մինչև դասընթացներ կազմակերպելը կոլխոզի
վարչությունը կոմյերիտական բջիջի հետ միասին ընտրել
են կազմակերպիչ հանձնաժողով դասընթացների թեկնա-
ծուներ նշանակելու համար: Մի քանի որից հետո հանձ-
նաժողովը ցուցակագրել ե 232 հոդի, վորոնցից 42-ը բատ-
րակներ և 136-ը չքավորներ: Սակայն վոչ կոլխոզի վար-
չությունը և վոչ ել կոմյերիտական բջիջը մեծ նշանակու-
թյուն չեն տվել՝ տրակտորական դասընթացների մասին
աղդաբնակության մեջ մասսայական բացատրող աշխա-
տանք վարելուն: Դրանից ոգտվում են կուլակային տար-
րերը: Նրանք ծավալեցին խմբական աղիտացիա տրակտո-
րային դասընթացների դեմ, փորձելով քայլայի կոլխոզ-
ների համար կաղրեր պատրաստելու աշխատանքը

«Ով վոր մտնի տրակտորային դասընթացները, նրան
ուղարկելու յեն Սիրիյ»:

Կուլակային աղիտացիայի հետևանքով դասընթացների
ունկընդիրների կազմը վորոշ փոփոխություն կրեց: Յե-
րեւակը որից հետո նրանց թիվը պակասեց 59 մարդով: 232
մարդու փոխարեն դասընթացներում մնացին 173: Յեկ
միայն դրանից հետո կոմյերիտական բջիջը կազմեց բատ-
րակ՝ չքալոր յերիտասարդության ժողով, բրիդաղներ
ընտրեց՝ բացատրելու կոլխոզնիկներին տրակտորային դաս-
ընթացների նշանակությունը և դրա չնորհիվ կարողացավ
քաշել դասընթացները յերիտասարդության նոր չերտեր:

Տրակտորային դասընթացներում սկսեցին սովորել 211
մարդ, բացառապես յերիտասարդությունը, 17-ից մինչև 24
տարեկան, դրանց թվում «30 գեղջկուհի աղջիկներ և 25 կոմյ-
երիտականներ»: Բնորոշ ե, վեր ունկընդիրների կազմի
մոտ 20%-ը կազմում եյին անդրագետ և քիչ գրադետ ջահել
բատրակները: Նրանք բացի տրակտորը ուսումնական բարելու

գործնական աշխատանքներից, ամեն որ 2—3 ժամ պարագում ելին անդրադիմությունը վերացնող կետերում։ Դասընթացների ժամանակը վորոշված եր մի ամիս, ըստ վորում փոխելով և անընդհատ աշխատում ելին յերկու հերթով, ամեն մի հերթը որական և ժամ։ Ծրագրի մի յերրորդը կաղմում եր դասընթացի տեսական (թեորետիկ) բաժինը, այսինքն մեխանիկայի տարրական թեորիան, իսկ յերկու յերրորդը նվիրված եր տրակտորի կառուցվածքի գործնական ուսումնասիրության, նրա մասերի փոխհարաբերություններին ծանոթանալուն և տրակտորը աշխատնքի ժամանակ կառավարելուն։

Բացի դրանից, սովորողների մի մասը զբաղվում եր անդրադիտության վերացումով, մյուս մասը թվաբանությամբ և դասընթացների ամբողջ կազմի համար լինում ելին զրույցներ հասարակագիտության մասին։

Կուրսերի ղեկավարող կազմը բաղկացած եր տեղական տրակտորային կալոննայի տեխնիկական ուժերից։ Հարկավոր ե նշել, վոր կարգապահությունը դասընթացներում որինակելի յեր և, ամենադիմավորը՝ յերիտասարդությունը մեծ ցանկությամբ ձգտում եր, վորքան կարելի յե, շատ գիտություն ձեռք բերել դասընթացներում, ավելի լավ ուսումնասիրել տրակտորի կառուցվածքը։

Գեղջիկուհի աղջիկները բացառիկ ուշադրություն և սերելին ցուցադրում տրակտորային գործում։ Գյուղական աղջիկների մեջ ներկայում զարթնում և ուժեղ ձգտում՝ ձեռք բերել տեխնիկական գիտելիքներ և սովորել մեքենաներ կառավարելը։

Դա ցայտում կերպով հաստատում ե մեր խոսակցությունը կոմյերիտուհի Ալուսֆինայի հետ, վորը աշխատել և Պեսչանսկու տրակտորային դասընթացը և պատմել ե մեղ, թե ինչպես ե ինքը տրակտորիստ դարձել։

— Եերբ բնիջը կոմյերիտականներին մոբիլիզացիայի եր յենթարկել տրակտորի վրա աշխատելու համար, յեռ ել սկսեցի մտածել այդ մասին։ Խոստովանում եմ, վոր հոռանձին ցանկություն չունեյի տրակտորի վրա աշխատելու

գլխավորապես այն պատճառով, վոր չեյի վստահում իմ ուժերին ու գիտությանը։ Յերբ մեր տանը ծնողներս իմացան այդ, բարձրացավ մի ամբողջ «փոթորիկ», բայց յես վճռեցի գնալ և համոզեցի նույնն անել նաև 7 աղջիկների։ Տնից յես հեռացա ծածուկ, այն պատրվակով, վորպես թե բնիջը գործուղղում ե ինձ յերեք որով տրակտորիստների կենցաղը ուսումնասիրելու համար։

Սկզբում ամեն տեղ մենք հանդիպում ելինք անբավականության, մանավանդ կուլակները մեր մասին տարածում ելին ամենաանմիտ լուրեր։ Աննկատելի կերպով մենք դուրս յեկանք դաշտը, տրակտորների մեջ։ Տրակտորիստները մեզ դիմավորեցին ծաղրով — տեսնենք, թե աղջիկները ինչպես են աշխատելու։

Մեզ սովորեցրին թե ինչպես վարել տրակտորի ղեկը, և մենք աստիճանաբար սկսեցինք ընտելանալ աշխատել ինքնուրույն։

Ընկերներ, դուք չեք կարող յերեակայել այն հրճվանքը, վորը մեղ համակեց այն վայրկյանին, յերբ մենք առաջին անգամ սկսեցինք անկախ կառավարել «ինտերնացիոնալ» տրակտորը։ Տրակտորի վրա մեր կատարած աշխատանքը հերքեց բոլոր նախապաշտմունքներն այն մասին, թե աղջիկը չի կարող աշխատել մեքենայի վրա։ Մենք ցույց տվինք, վոր աղջիկները տղամարդկանցից վատ չեն կառավարում մեքենան։ Ուզում ենք աշխատել, ուզում ենք ճանաչել մեքենան իր բոլոր նըրություններով։

Տրակտորիստ-աղջիկները մեծ ընդունակություններ են ցուցահանել աշխատանքի մեջ, աշխատանքի ընդհատումներ ավելի քիչ են անում, գործարքումները քիչ են, ավելի խնամքով են վերաբերվում մեքենաներին։

ՎԵՐՑՆԵՆՔ ՇԵՖՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎՐԱ
ՎԵՐՋ ՏԱՆՔ ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՆ
ԲԱՐԲԱՐՈՍԱԲԱՐԱՐ ՎԵՐԱԲԵՐՎԵԼՈՒՆ

Կոլլողների բուռն զարգացման հետ միաժամանակ բարձրանում ե գյուղատնտեսական մեքենաների և, գլխավորա-

վորպես, տրակտորների և կոմբայնների հսկայական պահանջը։ Կուսակցությունը և կառավարությունը մի շարք վճռական միջոցներ են ձեռք առել մեքենա-տրակտորային շինարարությունը արագացնելու համար (ավարտվում է Ստալինդրադի ավտոգործարանի շինությունը, սկսել են շինուել Զելյարինսկի գործարանը և այլն)։ Սակայն դրա հետ միասին անհրաժեշտ է, վոր բոլոր կոլխոզները և, ամենից առաջ, կոմյերիտական կազմակերպությունները խնամքով վերաբերվեն գյուղատնտեսական մեքենաներին։

Կոլխոզների և սովխոզների ճնշող մեծամասնության մեջ գոյություն ունի խայտառակ վերաբերմունք գյուղատնտեսական գործիքների նկատմամբ։ այդ վերաբերմունքը հաճախ հավասարվում ե վնասարարության։

Համարյա բոլոր կոլխոզներում և սովխոզներում տրակտորները, կալսիչները, քամհարող մեքենաները, ցանիչները, գութանները և արտադրության այլ գործիքները մնում են առանց հսկողության։ Բերենք մի ապշեցուցիչ որինակ։ Բալաշովի շքանի «Կազաչկա» սովխոզում մոտ 70 տրակտոր աշնանային դաշտային աշխատանքները վերջացնելուց հետո մինչև 1930 թ. գարունը մնացել են բաց ողի մեջ, ժանդոտել են ու փշացել անձրեսի և ձյունի տակ։ Բայց չե՞ վոր այդ սովխոզում կա կոմյերիտական կազմակերպություն, վորը կանոնավորապես ժողովներ ե գումարում, պլաններ ե ծրագրում, վճիռներ ե կայացնում և հաղորդում նաև ույոնական կոմիտեյին, վոր սովխոզում ամեն ինչ, վորպես թե, լավ ե գնում։

Թող ամեն մի կոմյերիտական բջիջ, ամեն մի կոմյերիտական ստուգի իր սովխոզում կամ կոլխոզում գյուղատնտեսական մեքենաների դրությունը և հաշվի, թե վորպեսի խոչոր վնասներ ե ունենում պրոլետարական պետությունը մեքենաներին անինա վերաբերվելուց։ Բացի այն, վոր մեքենաներին բարբարոսարար վերաբերվելը հսկայական վնասներ ե հասցնում, այլ և արագ մաշվում են մեքենաները։ Քանի հարյուրավոր և հազարավոր արժեքավոր գյուղատնտեսական գործիքներ են փշանում, կոտրվում և անժա-

մանակ դուրս են ընկնում շարքից՝ անթույլատրելի վերաբերմունքի պատճառով։

Այս կոլխոզային կոմյերիտական կազմակերպությունների համար աշխատանքի մի բավականաչափ կարևոր առողջապահությունների՝ ըստ արտադրական պրինցիպի վերակառուցելու հիմնական նշանակությունը հենց նրա մեջն ե կայանում, վոր դեմքերս դարձնենք գեպի կուտանսությունը, որեցոր զբաղվենք թեկուղ ամենամանր տնտեսական գործերով, վորոնք անկասկած նպաստելու յեն կոլեկտիվ տնտեսության ամրապնդմանը։

Դեպի գյուղատնտեսական մեքենաներն ունեցած ուշադիր վերաբերմունքի մի գեղեցիկ որինակ տալիս ե կոմյերիտմիության Սամոյլովսկու ռայոնի կազմակերպությունը, վորը առաջին եր, վոր ընդունեց շեֆությունը մեքենաների վրա և դիմեց «Կոմսոմոլսկայա Պրավդա»-ի բնակչությունը բոլոր կոմյերիտական բջիջներին, բոլոր կոմյերիտիչներին և կոլխոզային յերիտասարդությանը։

Սամոյլովի կոմյերիտական կազմակերպությունը իր շեֆությունը մեքենաների վրա նշանավոր դարձրեց նրանով, վոր իր վրա առավ մի շարք պարտականություններ, վորոնցով զբաղված ե այժմ ամբողջ կազմակերպությունը։ Բերենք մի հատված համատարած կոլեկտիվացման Սամոյլովսկու ռայոնի կոմյերիտականների դիմումից։

«Մենք պարտավորվում ենք. ամեն մի կոլխոզում այժմ իսկ կազմակերպել բրիգադներ հսկելու և վերանորոգելու գյուղատնտեսական մեքենաները։ Ամեն մի կոլխոզում կազմակերպել մրցություն մեքենաների ամենալավ ոգտագործման և դեպի մեքենաները ունեցած վերաբերմունքի համար և կոմյերիտական տրակտորիստների ու կոլխոզնիկների մեջ սահմանել մրցություն տրակտորներին լավագույն խնամք տանելու համար։ Կազմակերպել կոմյերիտական տրակտորիստներից և կոլխոզային յերիտասարդությունից բրիգադներ մեքենաներին մշտապես հսկելու համար։ Կազմակերպել ռայոնում շաբաթական դասընթացներ կոմյերիտական ակտիվի համար՝ գյուղատնտեսական մեքենաներին հսկելու։

Դրա հետ միասին մենք կազմակերպում ենք նաև մասսայական բացատրիչ աշխատանք կոլխոզների մեջ՝ մեքենաներին խնամելու կարգի և մեքենաները աշխատանքի միջոցին շահավետ ոդտադործելու մասին։

Համատարած կոլեկտիվացման ռայոնի ամբողջ կոմյերի տական կազմակերպության անունից Լենինյան Համամիութենական կոմյերի տուժյան ռայոնական կոմիտեն կոչ և անում բոլոր կոլխոզային բջիջներին, բոլոր կոմյերի տականներին ընդունել շեֆությունը գյուղատնտեսական մեքենաների վրա։

Սամոյլովսկու ռայոնի կոմյերի տականների նախաձեռնությանը պիտի ճայնակցեն բոլոր կոլխոզային բջիջները։ Պետք ե աշխատել, վոր ամեն մի կոմյերի տական, ամեն մի կոլխոզիկ սիրե մեքենան և հոգա նրա մասին, սիրով վերաբերվի նրան։ Անհրաժեշտ ե հիշել, վոր գյուղատնտեսական մեքենաները համատարած կոլեկտիվացման ռայոնի պայմաններում հսկայական կարևորություն ունեն։ Միայն մեքենան և ընդունակ թեթևացնելու կոլխոզիկի ծանր աշխատանքը և բարձրացնելու կոլեկտիվ տնտեսության ապրանքային յեկամուտը։

Հոժար կամքով միացած ու կոլեկտիվ տնտեսություն ստեղծած աշխատավորների ճեռքում մեքենան այն ուժն ե, վորին խելացի կերպով տիրապետելով, կոլխոզները կառուցեն սոցիալիստական տնտեսությունը։

Գյուղատնտեսական մեքենաներին բարբարոսարար ու խայտառակ վերաբերվելուն պետք ե վերջ տալ։ Միաժամանակ մենք պիտի ամբողջ ուժով հարվածենք կուլակային ագիտացիան աշխատավոր գյուղացիների մեջ, թե՝ «յեթե մտնում ես կոլխոզ, ծախիր մեքենաները»։

Երբեմն գյուղացիների յետամնաց մասը կուլակի ազդեցության տակ վոչ միայն ծախում, այլ և փչացնում ե գյուղատնտեսական գործիքները և ապա հանձնում է իրու մետաղայա:

Կոմյերի տուժյան կազմակերպությունների պարտականությունն ե — բացատրել աշխատավոր գյուղացիության

լայն մասսաներին գյուղատնտեսական մեքենաների մեծ նշանակությունը նոր կոլխոզային գյուղի շինարարության գործում։ Կոլխոզների կոմյերի տուժյան կազմակերպությունները պարտավոր են որինակ ցույց տալ նոր կոմունիստական աշխատանքի և գյուղատնտեսական մեքենաներին խնամքով վերաբերվելու գործում։

Եփությունը մեքենաների վրա — դա պայքար ե գյուղատնտեսական գործիքներին խնամքով վերաբերվելու, գյուղատնտեսական մեքենաները հմտորեն ոդտադործելու համար, վորպեսզի արագորեն վերակառուցենք գյուղական տնտեսությունը նոր, սոցիալիստական հիմունքներով։

ԶԻՆԵՆՔ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ

Ամենքն ել գիտեն, վոր քաղաքական և գյուղատնտեսական անդրագիտությունը, գյուղի ջրավոր-միջակ մասաների անուս լինելն ու յետամնացությունը մեծ արգելք են դառնում գյուղատնտեսության զարգացման համար։ Աշխատավոր գյուղացիների հիմնական մասսայի գյուղատնտեսական անդրագիտության չնորհիվ մեր գյուղատնտեսությունը կիստ յետ ե մնացել և այդ բանը ազդում ե գյուղավորապես մեր գյուղացիական դաշտերի բերքի վրա։ Միևնույն ժամանակ մեր ճեռքում ունենք բերքը բարձրացնելու զորեղ միջոց։

Սովխոզների, կոլխոզների և փորձնական-ցուցադրական դաշտերի փորձից մեզ հայտնի յե, վոր վաղ գարնան ցելը ավելացնում ե բերքը ավելի քան մի քառորդի, իսկ մի քանի տեղերում նույնիսկ կիսի չափ։ Սերմների զոումը ավելացնում է բերքը 15 — 20%։ Շարքավոր ցանքսը տնտեսում ե անհատական տնտեսությանն անհրաժեշտ սերմացուի մի քառորդից ավելին և բարձրացնում է բերքը 10 — 15%-ով։ Կարելի յե դեռ շատ հասարակ գյուղատնտեսական միջոցառումներ բերել, վորոնց կիրառությամբ կարելի յե զգալի չափով բարձրացնել գյուղական տնտեսության ապրանքայինությունը։

Ահա ինչու գյուղատնտեսական գրադիտության հարցերը գյուղական տնտեսության արմատական վերակառուցման պայմաններում սոցիալիստական հիմքերով՝ ստանում են բացառիկ քաղաքական կարևորություն՝ ամենից առաջ կոլեկտիվ տնտեսությունների համար:

Զինելով կոլխոզնիկներին գյուղատնտեսական գիտելիքներով, այդ ուսումը կապելով բատրակների, չքավորների և միջակների հասարակական-քաղաքական ակտիվության ուժեղանալու հետ, ուղղել աշխատավոր գյուղացիական մասսաների այդ ուժեղացող ակտիվությունը դեպի կոլխոզների տնտեսական ամրացումը, —սա պետք է մնի տեղական կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների կոնկրետ խնդիրը:

Գյուղատնտեսական անդրադիտության վերացման կաղմակերպման ձեռներեցությունը պատկանում է ներքին վոլգային: Անցյալ տարվա նոյեմբերին կուսակցության յերկրացին կոմյերելու և կոմյերիտմիության վորոշումով հայտարարված եր գյուղատնտեսական անդրադիտության լիկվիդացիա: Յերկու-յերեք ամսվա ընթացքում այդ արշավը դարձավ մասսայական կամպանիա գյուղատնտեսական անդրադիտությունը վերացնելու համար՝ կոլխոզների և չքավոր-միջակ մասսաների մեջ:

Գյուղերում ստեղծվում եյին հանձնաժողովներ գյուղատնտեսական անդրադիտության վերացման արշավանքի համար: Այդ հանձնաժողովներին ողնելու համար կոլխոզացին յերիտասարդության գվրոցներին, գյուղատնտեսական տեխնիկումներին, փորձնական-ցուցադրական կայաններին կից կաղմակերպվեցին ոժանդակիչ բջիջներ, վորոնք ընտրում եյին գյուղատնտեսական անդրադիտությունը վերացնողների կաղըեր: Կոմյերիտական կազմակերպությունների նախաձեռնությամբ խրճիթ-ընթերցարաններին, կարմիր անկյուններին և կոլխոզային յերիտասարդության գվրոցներին կից կաղմակերպվեցին անդրադիտության վերացման խմբեր: Բացի դրանից, կոլխոզնիկների, գյուղացիների, չքավորների և միջակների համար կազմակերպվում

եյին դասախոսություններ և զեկուցումներ գյուղատնտեսական գիտելիքների մասին: Բոլոր կազմակերպված դասընթացներում, քաղաքական դպրոցներում և անդրագիտության վերացման կետերում գյուղատնտեսը կամ կոլխոզային յերիտասարդության դպրոցների ուսանողները մի ժամ նիւրում եյին գյուղատնտեսական գիտելիքներին: Շնորհիվ դրան, համատարած կուեկտիվացման շատ ուայոններում գյուղատնտեսական արշավի միջոցով տեղական կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները հնարավորություն ունեցան լիկվիդացիայի յենթարկել կոլխոզնիկների մեջ տարրական գյուղատնտեսական անդրագիտությունը և այդպիսով բարձրացնել բատրակների, չքավորների և միջակների մասսաների հասարակական-քաղաքական ակտիվությունը կոլխոզների տնտեսական ամրացման և կոլխոզային դաշտերի բերքի բարձրացման համար:

Անհրաժեշտ է, վոր այդ փորձը ոգտագործեն կոլխոզացին բոլոր կոմյերիտական կազմակերպությունները: Ամենից առաջ ամեն մի բջիջ պետք է կազմակերպե բատրակ, չքավոր և միջակ յերիտասարդությունից խմբեր գյուղատնտեսական գրադիտությունը սովորելու համար: Անհրաժեշտ է քաղաքական գվրոցներում և ընթացիկ քաղաքականության կրուժուններում սահմանել գյուղատնտեսական ժամ: Հարկավոր է կազմակերպել գյուղատնտեսական յերեկույթներ, դասախոսություններ և զրույցներ: Ամեն մի կոմյերիտական պարտավոր է վերացնել իր գյուղատնտեսական անդրադիտությունը: Ամեն մի կոմյերիտական բջիջ պետք է ձեռք բերի գյուղատնտեսական գիտելիքները, վորպեսզի ավելի մեծ հաջողությամբ կարողանա կազմակերպել կուեկտիվ տնտեսությունները:

«Գյուղատնտեսական գիտելիքները պիտի ծառային գյուղական սոցիալիստական տնտեսությանը»: Այդ լոգունգով կոմյերիտականները պիտի համատարած կուեկտիվացման ուայոններում վարեն աշխատանքներ՝ լիկվիդացիայի յենթարկելու գյուղատնտեսական անդրադիտությունը կոլխոզների և այն գյուղացի չքավորների ու միջակների մեջ, վորոնք դեռ ևս կոլխոզ չեն մտել:

ԱՄՐԱՑՆԵՆՔ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Կոմյերիտմիության կենտկոմի դեկտեմբերի պլենումը նշել ե, վոր կոմյերիտմիության աշխատանքի թափը յետ ե մոռմ սոցիալիստական շինարարության ուժեղացող թափից : Յետ ե մնացել նաև Միության ղեկավարությունը այն նոր խնդիրներից, վորոնք դրված են կոմյերիտմիության առաջ՝ վերակառուցման ժամանակաշրջանում : Այդ յետամացությունը առանձնապես աչքի յե ընկնում կոմյերիտմիության աշխատանքների մեջ համատարած կոլեկտիվացման ռայոններում :

Այդ յետամացության հիմական միտքն այն ե, վոր կոլխոզների տնտեսական ամրացումը դեռ ես հիմական խնդիր չի դարձել կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի մեջ : Կոմյերիտական կազմակերպությունները ամենից շատ զբաղվում են իրենց ներքին կյանքի հարցերով, իսկ յերբեմն իրենց աշխատանքի ընթացքում սոսկ կուլտուրական աշխատանքների յեն անցնում : Այդ դեպքում նրանց աշխատանքի մեջ չափազանց թույլ արտահայտություն են գտնում կոլխոզների արտադրական կյանքի խընդիրները և բարերակ ու չքավոր յերիտասարդության ակադեմությունը :

Յերկու ռայոնական կոմյերիտական կազմակերպությունների գործնական աշխատանքի որինակով անհրաժեշտ ե ցույց տալ կոմյերիտական կազմակերպությունների յետամացությունը և արտադրական գծով վերակառուցվելու առաջին փորձը :

Սամոյլովսկու ռայոնի կոմյերիտական կազմակերպությունը, վորը մեծ ոգնություն ե հասցրել կուսակցությանը հացամթերման ժամանակ, չի կարողացել իր գանձած փորձն ու յեռանդը կապել ռայոնի համատարած կոլեկտիվացման աշխատանքին : Ռայոնական ղեկավարությունը թույլ ե տվել մի անմիտ «դադար» . «աշխատեցինք, կարելի յե այժմ հանդստանալ» :

Այդ վնասակար դադարի հետևանքն յեղավ այն, վոր կոմյերիտական կազմակերպությունները չկարողացան անցնել բարարակների, չքավորների և միջակների յերիտասարդությունը դլուխ, նրանց ուժերը լավ չկազմակերպեցին կոլխոզների տնտեսական ամրացման պայքարում : Պատահական դեպք չե, վոր ռայոնի բջիջների մեծամասնությունը չեր գումարում բարակ-չքավոր յերիտասարդության ժողովները չեր քննում կոլխոզների տնտեսական շինարարության հարցերը : Ռայոննի կենտրոնում, Սամոյլովկայում, ռայոնական կոմյերիտայի կողքին, վորտեղ առանձնապես վատ ե ընթանում գյուղական տնտեսության կոլեկտիվացումը, գյուղացական կոմյերիտական բջիջը գյուղացիների հետ ունեցած վճռական վեճերի ժամանակ, ամբողջ գյուղում կըպցը եր ահազդին ափիշաներ այս բովանդակությամբ .

«Այսոր լլ աստիճանի դպրոցում կազմակերպվում ե դրական-գեղարվեստական յերեկույթ, վորից հետո կլինեն պարեր «մինչև ուժից ընկնելը» :

Հասկանալի յե, վոր մենք դեմ չենք դրական-գեղարվեստական յերեկույթներին, բայց ախր պետք ե իմանալ ժամանակը : Հարկավոր եր բոլոր կոմյերիտականներին և դպրոցի աշակերտներին ուղարկել ռայոնի գյուղերը ոգնելու կոմյերիտական բջիջներին կոլխոզների ամրացման գործում և վոչ թե պարել «մինչև ուժից ընկնելը» :

Գեսչանկա գյուղում կոլխոզը կազմակերպելու ժամանակ կուլակների աղիտացիայի աղդեցության տակ ձիյերի քանակությունը իջավ 735-ից մինչև 406-ի և միայն մի դիշերվա մեջ մորթվեցին մոտ հազար վոչխար, իսկ այդ ժամանակ բջիջը շաբաթվա մեջ յերկու անդամ կազմակերպում եր յերեկույթներ յերիտասարդության համար և ելի «պարերով» :

Ճիշտ ե, քիչ չեն այնպիսի կոմյերիտական բջիջներ, վորոնք կարողացել են կոլխոզային շարժման գլուխ անցնել և արժեքավոր փորձերով հարստացնել կոմյերիտական կազմակերպությունները : Մենք արդեն պատմել ենք նովոԱլեքսանդրովկայի բջիջի մասին, վորը չնայած բոլոր դը-

վարություններին, կազմակերպել ե կոլխող և համառությամբ աշխատում ե կոլխողի տնտեսական ամրացման խընդիրների վրա։ Առանձին ուշադրության արժանի յե Դվորնովո գյուղի բջիջի աշխատանքի փորձը (Նովո-Ալեքսանդրովկայի ռայոնում)։

Այդ բջիջը անցյալ տարվա գեկտեմբերի սկզբում ժողովի մեջ քննիլ ե կոլխողի վարչության անդամ կոմյերիտականի դեկուցումը և կայացրել ե հետեւյալ վճիռը։

«Կոմյերիտական բջիջի ժողովը համարում ե, վոր կունողի վարչությունը լավ ե տարել կազմակերպչական աշխատանքը և բավականաչափ կատարել ե ձմեռային հերկը, բայց կան և պակասավոր կողմեր. չի կատարված ինվենտարի հաշվարկություն, կոլխողնիկների ներգրավումը արտադրական աշխատանքների մեջ թույլ ե կատարված և այլն։ Հաշվի առնելով այդ ամենը, կազմակերպել բրիդադներ՝ անասուններին որինակելի կերպով կերակրելու, գյուղատնտեսական ինվենտարը նորոգելու համար և այլն»։

Դեռ ևս ձմեռվա հերկի ժամանակ բջիջը հարվածային կարգով կոչեց կոմյերիտականներին գեղի արականոր։ Սա կատարվեց այսպես. ձմեռվա հերկի ամենաթունդ ժամանակ յերեան յեկավ մշակման թույլ թափը։ Հարկավոր եր հավաքել կոլխողների բոլոր ուժերը և, ամենից առաջ, անհրաժեշտ եր ոդտագործել տրակտորները վորքան կարելի յե մեծ բեռնավորումով։

Կոլխողնիկների սւժերի հավաքի սկիզբը դրեց կոմյերիտական բջիջը։

Անցյալ տարվա սեպտեմբերի վերջում բջիջը վորոշում կայացրեց. «Բոլոր կոմյերիտականներին ուղարկել տրակտորների վրա, կազմակերպել կոմյերիտականներից հարվածային բրիդադներ ձմեռվա հերկի համար»։ Դրանից հետո բոլոր կոմյերիտականները մի թեթև պատրաստվեցին և բաժանվեցին բրիդադների։ Դաշտում կոմյերիտականները հանդիսացան ձեռներեցներ սոցիալիստական մրցության տրակտորիստների միջև։ Կոմյերիտականների նախաձեռնությամբ կազմակերպվեց կոլեկտիվ անդառություն տրակ-

տորիստների համար։ Դաշտում նրանք շինեցին լենինյան վրան, վորոտեղ լրագրների խմբական ընթերցանություն եր տեղի ունենում։ Աշխատանքից ազատ ժամանակ տրակտորիստները հանդառնում եյին, լսում եյին ուղիո և այլն։

Սակայն այդ յերկու բջիջների չափազանց արժեքավոր փորձը կոլխողների ամրացման վերաբերմամբ չոգտագործեցին ռայոնական կոմիտեները և չծավալեցին ամրող կազմակերպության մեջ։ Յեթե Սամոյլովոյի և Նովո-Նիկոլաևսկի ռայոնական կոմիտեները հարստացնեյին Նովո-Ալեքսանդրովյայի և Դվիյնովոյի բջիջների փորձերով ռայոնական կոմյերիտականների մասնակցությունները, դա հազար անդամ ավելի մեծ արժեք կունենար, քան ընդհանուր բնագործություն կրող հրահանգները և վորոշումները կոմյերիտականների մասնակցության մասին գյուղական տընտեսության կոլեկտիվացման մեջ։ Կոմյերիտմիության շատ կոմիտեների դժբախտությունը կայանում ե նրանում, վոր նրանք չեն նկատում առանձին կոմյերիտական կազմակերպությունների լավ փորձերը։ Պետք ե կարողանալ գտնել լավ փորձի թեկուղ փշրանքներ բջիջներում, գանձել և ստուգել դրանց և հարստացնել այդ փորձով ամրող կազմակերպության աշխատանքը։

Միաժամանակ առանձին բջիջների հետ, վորոնք վատ չեն գործել կոլխոզային շինարարության մեջ, շատ կոմյերիտական կազմակերպություններ չեն կարողացել հասկանալ հայտարած կոլեկտիվացումով ստեղծված նոր պայմանները։ Սամոյլովոյի ռայոնական կոմիտեն մոլորվեց, չիմացավ, թե ինչպես պետք ե կառուցի իր զեկավարությունը համատարած կոլեկտիվացման պայմաններում։ Կոլեկտիվացումը նրան հանկարծակի բերեց։ Ռայոնական կոմիտեն «զարթնեց» միայն դեկտեմբերի վերջին, յերբ գյուղական տնտեսությունների կեսից ավելին կոլեկտիվացված եր։ Միայն դրանից հետո ռայոնական կոմիտեն բաց թողեց խիստ հրահանգ—

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ

ՈՒԺԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՃՈՒՂ ԴԻՐՔԵՐԻ ՎՐԱ

«Խիստ շուապ

ՀՐԱՄԱՆ

Կոմյերիտմիության բոլոր բջիջներին առաջարկվում է 24 ժամվա ընթացքում վերակառուցել իրենց աշխատանքը հարվածային-մարտական թափով, ապահովելով առ 1 հունվարի 1930 թ. մեր ուայոնի կոլեկտիվացումը 100 տոկոսով և ուստի-հումուռյի հավաքումն։ Բջիջի բյուրոյի պատասխանատվությամբ ժողովել բոլոր կոմյերիտականներին և կուսակցական բջիջի հետ միասին անհապաղ կաղմակերպել գյուղական խորհուրդներին կից կոլեկտիվացմանը նպաստելու շտաբներ։

Կոմյերիտմիության ուայոնական կոմիտեյի պատասխանատու քարտուղար Զվանով»

Ուայոնական կոմիտեյի «գլուխը պտույտ յեկավ» կոլեկտիվացման հաջողություններից և դրա համար նա փոխանակ իսկապես ղեկավարելու կոմյերիտական բջիջը, կանոնեց հրամաններ արձակելու ճանապարհի վրա, վորը բացի վնասից, ուրիշ վոչինչ չտվեց։ Ուայոնական կոմիտեյի հրամանը բջիջի համար բոլորովին անսպասելի յեր։ Այդ անսպասելի հրամանը զարմացրեց բջիջն, վորովհետև վերջինս ամեններին չգիտեր, թե ինչպես պետք է վերակազմվել 24 ժամվա մեջ և ինչի համար են կոլեկտիվացման ոժանդակիչ շտաբները գյուղական խորհուրդներին կից։

Մի խոսքով, հրամանը մնաց, վորպես մի անիմաստ թղթի կտոր։ Բջիջները սպասում եին վոչ թե հրաման, այլ ողնություն կոլխոզների տնտեսական ամրացման և բատրակու չքավոր յերիտասարդության հետ պարապելու համար։ Այսպիսով Սամոյլովսկու ուայոնում այդ վերակառուցումը արտադրական գծով ձևականորեն վերջացած է։ Պատմենք, թե ի՞նչպես է կատարվել այդ։ Դեռ ևս անցյալ տարվա դեկտեմբերին կուսակցության ուայոնական կոմիտեն, սկսելով կաղմակերպչորեն վերակառուցել կուսկաղմակերպությունը։ Փարբիկ-գործարանային կաղմակերպությունների սկզբունքով, առաջարկեց նաև կոմյերիտմիության ուայոնական կոմիտեյին զրադշել այդ գործով կոմյերիտական կաղմակերպության գծով։

Համատարած կոլեկտիվացման ռայոններում սկսվել ե կոլխոզային կոմյերիտական կաղմակերպությունների վերակառուցումը արտադրական սկզբունքով։ Այդ վերակառուցման գլխավոր նշանակությունը կայանում է նրանում, վոր կոմյերիտականները ամբողջ մասսայով շրջվեն՝ տնտեսական և կուտարական շինարարության բոլոր ճյուղերում՝ ակտիվ մասնակցության կողմը, վորպեսզի յենթարկեն իրենց ամբողջ աշխատանքը և յուրաքանչյուր քայլը կոլխոզների տընտեսական կյանքի ամրացման խնդիրներին։ Վոչ թե խոսքով, այլ գործով գառնան ձեռներեցներ՝ նոր գործառնությունների, գլուխ կանգնեն բատրակ, չքավոր և միջակ յերիտասարդության ուժեղացող ակտիվության։

Կոլխոզային կոմյերիտական կաղմակերպությունների վերակառուցումը արտադրական գծով պետք է նպաստե այն բանին, վոր կոլխոզային կաղմակերպությունները կարողանան արագորեն տիրանալ տեխնիկական կուտուրային։

Սակայն մի շարք տեղական կաղմակերպություններում դեռ ևս չեն դիտակցել կոմյերիտական կաղմակերպությունների վերակառուցման բացառիկ կարևոր նշանակությունը և մոտեցել են այդ մեծ գործին ձեռականորեն։ Համատարած կոլեկտիվացման Սամոյլովսկու ուայոնում այդ վերակառուցումը արտադրական գծով ձևականորեն վերջացած է։ Պատմենք, թե ի՞նչպես է կատարվել այդ։ Դեռ ևս անցյալ տարվա դեկտեմբերին կուսակցության ուայոնական կոմիտեն, սկսելով կաղմակերպչորեն վերակառուցել կուսկաղմակերպությունը։ Փարբիկ-գործարանային կաղմակերպությունների սկզբունքով, առաջարկեց նաև կոմյերիտմիության ուայոնական կոմիտեյին զրադշել այդ գործով կոմյերիտական կաղմակերպության գծով։

Կոմյերիտմիության ուայոնական կոմիտեն ստանալով այդ հրահանգը կուսակցական կոմիտեյից և շիմանալով, թե ինչի

համար ե այն, ուղարկեց բջիջներին թղթեր, առաջարկելով
նրանց գնալ տնտեսությունները, հրահանդելով, վոր այսինչ
գյուղերում կազմակերպեն կոլեկտիվներ: Յեվ այդ այն ժա-
մանակ, յերբ բացարձակապես վոչ մի նախապատրաստական
աշխատանք չեր կատարված: Բջիջները ստանալով ուսյոնա-
կան կոմիտեյի հրահանդը, մեքենայորեն ուղարկում են կոմ-
յերիտականներին տնտեսությունները, իսկ մի քանի դյուլե-
րում (Կրիուշա և Պեսչանկա) առանց հասկանալու, թե բանը
ինչումն ե, բաժանում են կոմյերիտականներին նրանց բնակ-
չության վայրի համեմատ և դրանից հետո կազմակերպում
են կոլեկտիվի բյուրոն:

Պատահական բան չե, վոր այն ժամանակ, յերբ յերեք
կոլխոզների կոմունիստներին միացնող կուսակցական կո-
լեկտիվի բյուրոն հաստատվել եր Պեսչանկա դյուլում, կոմ-
յերիտական կոլեկտիվը գտնվում եր նրանից 6 կիլոմետր հե-
ռու, Կամենկա գյուղում: Դա նրանից եր, վոր կոմյերիտա-
կան վերակառուցումը կատարվել եր վոչ թե արտադրական
զծով, այլ ըստ բնակչության վայրի:

Կոլխոզային կոմյերիտական կազմակերպությունների վե-
րակառուցման նպատակների և խնդիրների մասին վոչ միայն
շարքային կոմյերիտականները, այլ նույն իսկ կոմյերիտա-
կան ակտիվը վոչինչ չդիտեն: Մեր հարցին, թե ի՞նու համար
ե կատարվում վերակառուցումը արտադրական հիմունքով,
կամենկայի կոլեկտիվի քարտուղարը տալիս ե հետեւյալ պա-
տասխանը.

— Այժմ, ուրեմն, ուսյոնական կոմիտեն թղթերը ուղար-
կելու յե վոչ թե ուղղակի կոլխոզային բջիջներին, այլ կո-
լեկտիվներին, իսկ մեղ այսուհետեւ մնում ե բջիջներին գրել
հրահանդներ:

Այսպիսով Սամոյլովսկու ուսյոնում կատարվել ե վոչ թե
վերակառուցում, այլ մեքենայական բեկում: Հասկանալի
յե, վոր այստեղ մեղավոր ե վոչ միայն ուսյոնական կոմիտեն,
այլ, գլխավորապես, Բալաշովի շրջանային կոմիտեն, վորը
դմիսի չի բնկել խորհրդակցության հրավիրելու ուսյոնական
կոմիտեների քարտուղարներին՝ նրանց հետ միասին մշակելու

կոլխոզային բջիջների արտադրական սկզբունքով վերակա-
ռուցելու գործնական միջոցառումները: Իհարկե, այդ տեսակ
վերակազմությունը, վորը չնորիհվ անշնորք դեկավարու-
թյան և խստ թույլ բացատրողական աշխատանքի՝ կոմյերի-
տականների մեջ, դարձել ե մի հասարակ «ցուցանակափոխու-
թյուն», փոխանակ եյական վերակառուցման՝ ըստ արտա-
դրական սկզբունքի, —չի՛ փոխել բջիջների աշխատանքի
ձևերը, մեթոդներն ու բովանդակությունը և նրանց դեկա-
վարությունը:

Այդ տեսակ վերակառուցումը չի լուծում այն խնդիրը,
վոր կոմյերիտական կազմակերպությունների արմատական
շրջադարձ կատարելով, պետք ե իրենց ամբողջ ուշադրու-
թյունը դարձնեն կոլխոզներություններին: Բոլորովին պարզ
է, վոր Սամոյլովսկու կազմակերպության փորձը ապացու-
ցում ե, վոր ամեն մի լավ գործ կարելի յե թաղել գործին ան-
շնորք վերաբերվելով—յեթե չի կատարվել բացատրիչ մեծ
աշխատանք և գործի չեն կոչվել կոմյերիտականների մաս-
սանները: Մենք արդեն ցույց տվինք, վոր կոլխոզային կազմա-
կերպությունների վերակառուցման հիմնական իմաստը
Փարբիկ-գործարանային կոմյերիտական կազմակերպու-
թյունների որինակով կայանում ե վոչ թե նրա մեջ, վոր մե-
քենայորեն ուղարկենք կոմյերիտականներին տնտեսություն-
ները և դրանով բավականանանք, այլ այնպես վերակառուցել
աշխատանքը, վոր այդ աշխատանքի ձևերը, մեթոդները և
բովանդակությունը յենթարկվեն կոլխոզների տնտեսական
կյանքի ամենատեսակ ամրացման, ունենան դասակարգային
պրոլետարական գունավորումն, կռեն-կոփեն կոմյերիտա-
կաններին բոյլշիկյան անհաշտ վոգով գեղի ամեն մի թե-
քումն կուսակցության հիմնական գծից:

ՊԱՅՔԱՐԵԼՈՎ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱԾՈՒՄ, ԱՄՐԱՑՆԵՆՔ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԱՅԻՆ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոմյերիտական կազմակերպությունների մի ամբողջ
շարք ակտիվ կերպով պայքարում ե գյուղական տնտեսու-

թյան կոլեկտիվացման համար՝ չքավոր-միջակ մասսաների հսկարակամ միացման հիմունքներով, շարունակ աշխատում և բարերակային-չքավորական յերիտասարդության հետ և հմտորեն կազմակերպում և միջակ յերիտասարդությունը։ Սակայն չի կարելի առել, վոր բոլոր կոմյերիտական կազմակերպություններն ել ակտիվ կերպով պայքարում են կուրակի գեմ, առաջապահ ջոկատներն են հանդիսանում գյուղական տնտեսության վերակարգության պայքարում սոցիալիստական հիմունքով։

Հակամիջակային ծոռւմների հետ միաժամանակ (վորոնց մասին կիսունք վարը) շատ կամյերիտական կազմակերպությունների աշխատանքի մեջ գյուղական տնտեսության կոլեկտիվացման գործում արտաքրեզել և յետամիացություն, ոպրատունիստական հակումներ։ Ինչի՞ մեջն ե յերևացել յետամիացությունը։ Նրա մեջ, վոր յերբեմն մի քանի կոմյերիտական բջիջներ քարշ են յեկել կոլխոզային շարժման պոչեց, առանձին կոմյերիտականները չեն ցանկացել առաջինը մասնել կոլխոզ, «սպասել են», մինչև վոր չքավոր և միջակ գյուղացիների հիմնական մասսան կշարժվի դեպի կոլխոզ։ Մի խոսքով, իրենք չեյն մտնում կոլխոզ և չեյն կազմակերպում չքավոր-միջակ մասսաները։ Դա ապացուցենք՝ Ներքին-Վոլգյան յերկրի կոմյերիտական կազմակերպությունների գործնեյությունից վերցրած փաստերով։ Համատարած կոլեկտիվացման նապյորսկու շրջանի կումյերիտական կիսունում մինչև 1930 թ. հունվարի մեկը կոլխոզ և մտել չքավոր-միջակ տնտեսությունների 60%-ը, իսկ կոմյերիտականների-միայն 24%-ը։ Միիսայլովսկու ույոնում կոլեկտիվացման մեջ է կատարվել Ուստ-Մեդվեդկասկի տայոնում մինչեւ կոմյերիտական տնտեսությունների 55%-ը, իսկ կոմյերիտականների — 40%։ Ուրյուկինսկու ույոնում գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը կազմում է 65%, իսկ կոմյերիտականներինը — 55%։

Ներքին-Վոլգյան յերկրային կոմիտեյի բրիգադը անցյալ տարի քննել և նապյորսկու շրջանում 45 բջիջ և հայտաբերել է, վոր 1075 կոմյերիտականներից կոլխոզներում մաս-

նակցում են միայն 716 մարդ և այդ այն ժամանակ, յերբ նապյորսկու շրջանում գյուղացիների ավելի քան 70%-ը արդեն կոլեկտիվացված եր։ Քննության յենթարկված 45 բջիջներից միայն չորսն են զբաղվել կոլեկտիվացման հարցով և միայն յերկուսն են գյուղացիական յերիտասարդության ժողովներ գումարել կոլեկտիվացման հարցերի առթիվ, ըստ գորում մի քանի կոմյերիտական բջիջներ աշխատել են հաշովողաբար վերաբերվել գասակարգային պայքարին գյուղում։ Հաճախ փորձել են «յոլա զնալ» կուլակի հետ, գործել նրանց հետ մի հարկի առակ, չեն մերկացրել կուլակության թշնամական դերը։ Այն ժամանակ, յերբ գասակարգային պայքարը գյուղում սրվում և, մանավանդ համատարած կոլեկտիվացման ույոններում, վորտեղ համատարած կոլեկտիվացման հիման վրա իրենք, չքավոր-միջակ մասսաներն են սկսել վիկիդացիայի յենթարկել կուլակին, վորպես գասակարգի, առանձին կոմյերիտական բջիջները յերբեմն կորցնում են մարտունակությունը, չեն կազմակերպում բատրակներին և չքավորներին, թույլ դիմագրություն են ցույց տալիս գասակարգային թշնամուն և հենց զրանով գործում են հոգուտ կուլակի։ Խապյորսկու շրջանի նովոկարգութիւն բջիջն ամբողջությամբ ձայնարկել և ընդուն կոմյերիտականների կոլխոզ մտնելուն։ Ուստ-Մեդվեդկասկու ույոնում մի կոմսոմոլկա առել ե.

— Ավելի լավ ե թունավորվեմ, քան թե կոլխոզ մտնեմ։ Մանավանդ մեծ ճեղքվածքներ բացվեցին Խապյորսկու շրջանի Ուստ-Մեդվեդկասկու ույոնական կազմակերպության մեջ։ Ի՞նչ է կատարվել Ուստ-Մեդվեդկասկու կազմակերպության մեջ։ Կոմյերիտական բջիջները գործնական աշխատանքներում չեն կիրառել կումակցության քաղաքականությունը։ Փոխանակ ակտիվ մասնակցություն ունենալու կոլխոզային շինարարության մեջ, ույոնական կոմիտեն և ամրող կազմակերպությունը աշխատել են հարստացնել անհաման տնտեսությունները։ Բոլոր կարևորագույն տրնտեսականների քաղաքական կամպանիաները — խորհուրդների վերընտրությունները, հացամթերումները, գյուղական տըն-

տեսության կոլեկտիվացումը — անուշադրության ելին մատնվում կոմյերիտական կազմակերպությունների կողմից : Կոմյերիտականները մի կողմ ելին քաշված դասակարգային կովից : Յեվ միայն չքավոր-միջակ մասսաների ուժեղ շարժումն եր գետի կոլխոզային շինարարությունը, վոր եր մեջ առավ կոմյերիտականների մի մասին :

Կազմակերպության մեջ բացակայում եր ինքնաքննադատությունը, նկատվում եր թագցնելու հակումն, գործերի մեծ կուտակումն, չեր կատարվում աշխատանք բատրակ և չքավոր յերիտասարդության հետ : Ղեկավարությունը ձեռք ելին առել նախկին կալվածատերերի, ատամանների և կուլակների վորդիները : Ընտրողական կամպանիայի ժամանակ բյուրոյի կազմում բատրակների տոկոսն իջակ՝ 34%-ից մինչև 18% :

Այլ ոպորտունիստական պրակտիկան յերկար ժամանակ Ուստի Սեղմեդեսկու կազմակերպության մեջ դիմադրություն չեր գտնում կոմյերիտմիության ղեկավարող մարմինների կողմից :

Ինչ են ասում այս փաստերը : Ամենից առաջ այն, վոր շատ կոմյերիտական կազմակերպություններ իրենց գործնական աշխատանքի մեջ անց ելին կացնում աջ ուկլնիստոնների ոպորտունիստական «թեորիաները» : Ի՞նչ ելին առաջարկում աջ ոպորտունիստները : Իջեցնել մեր յերկրի ինդուստրացման թափը, թուլացնել գյուղական տնտեսության կոլեկտիվացումը, շատ չնեղել կուլակին, վորը, վորպես թե զներաճելու յե սոցիալիզմի մեջ» և այլն : Իսկ ի՞նչ են նշանակում, յեր կոմյերիտական առանձին կազմակերպությունները քարշ են գալիս կոլխոզային շինարարության պոչից, չեն ցանկանում վճռականապես կովել կուլակի դեմ և լիկիդացիայի յենթարկել նրան համատարած կոլեկտիվացման հիման վրա, զբաղվում են «ջահել կուլակին վերադասիարակելու» խոսակցությամբ, չեն կազմակերպում և չեն աշխատում բատրակների և չքավորների հետ : «Յեթե կոմյերիտական կազմակերպությունները քարշ կգան սոցիալիստական շինարարության արագ թափի պոչից, յեթե չեն ունե-

նա իրենց աշխատանքի մեջ հարկավոր հեղափոխական թափն ու ծավալը, — այդ գեղագում նրանք կանգնած կլինեն դեպի ոպորտունիզմը սողոսկելու վտանգի առաջ, յեթե նույնիսկ ձևականորեն գտնվեն ճիշտ քաղաքական գծի վրա» : (Կոմյերիտմիության կենտրոնի դեկտեմբերի պլենումի վորոշումներից) : Այլ ոպորտունիզմը կուսակցության և կոմյերիտմիության մեջ ներկայումս զլիսավոր վտանգն և հանդիսանում, դրա համար ել կոմյերիտական կազմակերպությունների զլիսավորագույն ինդիբրները կայանում են նրա մեջ, վոր միշտ և ամեն տեղ կատաղի կոփվ մղեն մեր կուսակցության լենինյան քաղաքականության մաքրության համար, որեցոր իրագործեն իրենց գործնական աշխատանքի մեջ կոմունիստական կուսակցության հիմնական դիմու, վճռական պայքար մղելով թե տեսականապես և թե գործնականապես աջ ոպորտունիզմի դեմ, վորպես զլիսավոր վտանգի դեմ, միաժամանակ ուժեղացնելով պայքարը ձախ ծոռւմների դեմ :

Իր «Գլխապտույտը հաջողություններից» հոդվածում, վոր Հրատարակած և 1930 թ. մարտի 2-ին, ընկ. Ստալինը դրել ե .

«Կարիք չկա աղացուցելու, վոր այդ հաջողությունները (կոլխոզակին շինարարության մեջ—ի. դ.) կարեռագույն նշանակություն ունեն մեր յերկրի վիճակի համար, ամբողջ բանվոր դասակարգի՝ վորպես մեր յերկրի ղեկավարող ուժի համար, վերջապես հենց կուսակցության համար» : Յեվ ապա .

«Դրանք, այդ հաջողությունները, ահագին նշանակություն ունեն հենց կուսակցության ներքին կյանքի համար, մեր կուսակցության դաստիարակության համար : Նրանք մտցնում են մեր կուսակցության մեջ աշխուժության և հավատի վորի դեպի իր ուժերը : Նրանք վորեորում են բանվոր դասակարգը հավատով՝ մեր գործի հաղթանակի նկատմամբ ; Նրանք մոտեցնում են մեր կուսակցությանը նոր միլիոնացր պահեստի անդամներ» :

Այդպես և գնահատել ընկ . Ստալինը վերջին տարում մեր կուսակցության ձեռք բերած հաջողությունները կոլխոզային շինարարության մեջ :

Դրա հետ միասին ընկ . Ստալինը նշել է նաև կոլխոզային շինարարության ստվերոտ կողմերը . նույն հողվածում նա գրել է . «Այդ տեսակ հաջողությունները յերբեմն պատվաստում են մեծամտության և ամբարտավանության վորդի . «Մենք ամեն ինչ կարող ենք , մենք վոչնչից չենք վախենում» : Դրանք , այդ հաջողությունները , հաճախ հարբեցնում են մարդկանց , նրանց զլուխն սկսում ե պտույտ գալ հաջողություններից , կորչում ե չափի զգացմունքը , կորչում ե իրականությունը ճանաչելու ընդունակությունը , առաջ ե դալիս ձգտում՝ գերազահատելու իր ուժեղը և թերագնահատելու հակառակորդի ուժերը , առաջ են դալիս արկածախնդրական փորձեր՝ մատի մի հարվածով լուծելու սոցիալստական շինարարության բոլոր հարցերը» :

Կոլխոզային շինարարության մեջ յեղած բոլոր սխալների արմատը , վորոնք արտացոլվել են տեղական կազմակերպությունների գործնեյության մեջ , դանվում ե կուսակցության գծի աղավաղման մեջ՝ կոլեկտիվացման ժամանակ , միջակի նկատմամբ ունեցած սխալ մոտեցումի մեջ :

Այդ հարցի առթիվ ընկ . Ստալինը իր «պատասխան կոլխոզիկ ընկերներին» հողվածում զբել է .

«Մոռացել են , վոր բոնությունը , վորը անհրաժեշտ ե և ոգտակար ե մեր դասակարգային թշնամիների դեմ պայքարելու գործում , անթույլատրելի և կորասարեր ե միջակի վերաբերմամբ , վորը մեր դաշնակիցն ե» :

Կոմյերիտական կազմակերպությունների գործնական աշխատանքների մեջ կոլխոզային շինարարության գործում թույլ են տրվել մի շարք խոշորագույն ծոռումներ : Բերենք մի քանի կոնկրետ փաստեր : Սամոյլովսկու ռայոնի Ուշանկադյուլության ռայոնական կոմիտեյի ներկայացուցիչը տեղական կոմյերիտականների հետ միասին այսպես է կատարել կոլեկտիվացումը . Փողովել են դյուլացիներին , արել են մի փոքրիկ գեղուցում այն մասին , վոր անհրաժեշտ

և ամբողջ գյուղով մտնել կոլխոզ և ապա գրել են գյուղացիների առաջ հարց . «Ով դեմ է կոլխոզին , նա դեմ է Խորհրդային իշխանությանը» , և վորովհետեւ վոչ վոք գյուղացի չքավորներից և միջակներից չեր ուղում յելնել Խորհրդային իշխանության դեմ , դրա համար ել ուժով բոլորին գրեցին կոլխոզ :

Մինչև այդ ժողովը վոչ մի բացատրիչ աշխատանք չի կատարվել ազգաբնակության մեջ , վոչ վոք չի հավաքել չքավորներին և չի պարապել նրանց հետ : Այդպիսով կոլխոզը կազմակերպվել ե առանց մասսայական բացատրիչ աշխատանքի , առանց կազմակերպելու բատրակներին և չքավորներին և նույն խակ ավելին՝ վոչ վոք գյուղացիներից արտելի կանոնադրությունը չի ընդունել , իսկ կոլխոզը կազմակերպել են :

Յերբ կուսակցության ռայոնական կոմիտեյի բյուրոյում հարցը ել են «ցավ ու դարդ կոլեկտիվացնողներին» դասակարգային պայքարի մասին , նրանք պատասխանել են .

— Մենք այսպես ենք սեղմել կուլակին , վոր նրա ձայն ել չի լսվում :

Այդ փաստը համոզում ե մեզ , վոր մարդկանց գլուխը պտույտ ե յեկել հաջողություններից , նրանք գերազնահատել են իրենց ուժերը և թերագնահատել են դասակարգային թշնամու ուժերը :

Պատմենք մի ուրիշ , ավելի ցայտուն փաստի մասին : Ակտարսկի շրջանի Քետրովսկու ռայոնի Ժուկովկա գյուղում կոմունիստները և կոմյերիտականները փոխանակ բացատրիչ աշխատանք վարելու դյուլացիների մեջ և կազմակերպելու չքավորներին , վախեցնում ելին դյուլացիներին նրանով , վոր յեթե նրանք կոլխոզ չմտնեն , նրանց կուղարկեն Սախալին , կանչեն մի վաշտ զինվորներ և տուգանք կատուն :

Հասկանալի յէ , վոր տեղական կազմակերպությունների գործնական աշխատանքում կատարած ծոռումները չափազանց բազմատեսակ ելին : Նովո-Նիկոլաևսկու ռայոնում գտնվող Վերինիյ-Կարգալի գյուղն ե գալիս կոլխոզմիության Խապյորսկու շրջանային ներկայացուցիչը : Իր գալու

որը ըրջանի լիազորը հրավիրում և գեղջկուհիների ժողով այս որակարգով։ «Կինը հողագործության բարձր ձևի մասին և կինը ցանքսի կամպանիայում»։ Պարզ ե, վոր բանը նրանում չէ, թե ինչ հարց ե դրվել կանանց քննադատությանը, այլ եյականն այն ե, վոր կոլխողմիության լիազորը իր զեկուցման մեջ անսաելի կերպով խառնում եր ամեն ինչ և փորձում եր մի զեշերվա մեջ նոր կաղմակերպված արտելը վերածել կոմունայի։

Իր զեկուցման մեջ նա գեղջկուհիներին ասում եր, վոր համատարած կոլեկտիվացումը կիրառվում ե նրա համար, վոր մեզանում մեծամեծ հողամասեր դատարկ են մնացել և չեն մշակվում և մենք ունենք շատ հող մշակելու համար բավականաչափ քարչող ուժ։ Յերբ նա հասավ կոմունայի կանոնադրության, նա միայն այսքանը կարողացավ ասել.

— Քաղաքացուհիներ, կոմունան-ֆրանսերն խոսք ե, դա կարելի յե համեմատել շուրբի, կնուտի, տուլուպի հետ, չե՞ վոր այդ խոսքերը թաթարերն ե, բայց մենք հասկանում ենք, անպես ել կոմունա խոսքը հասկանալի պիտի լինի մեզ համար։

Իհարկե, ժողովին ներկա յեղած գեղջկուհիներից վոչ մեկը, չնայած իր ամբողջ ուշադրությանը դեպի զեկուցուլը, վոչինչ չհասկացավ։

Արտելը, վորպես կոլխողային շինարարության հիմնական ողակներից մեկը, դեռ ևս հաստատում չի դարձել, իսկ վոմանք, չիմանալով այդ, փորձում են հանրայնացնել բնակարանները, մանր անասունները, տնային թռչունները, յեռանդով աշխատում են բյուրոկրատական միջոցներով հրամանադրել այդ հանրայնացումը այն ժամանակ, յերբ դեռ ևս այդ տեսակ հանրայնացման համար պայմանները չեն հասունացել։

Թուչելը գյուղատնտեսական արտելի վրայից, վորը կոլխոզային շինարարության գլխավոր ձևն ե, նշանակում ե կոպիտ կերպով աղավաղել կուսակցության գիծը։

Իր «Գլխապտույտ հաջողություններից» հոդվածում ընկ Ստալինը գրել ե.

«Զարացնել կոլխոզնիկ գյուղացուն հանրայնացնելով բնակարանները, բոլոր կաթնատու անասունները, բոլոր մանր կինդանները, տնային թռչունները, յերբ արտելային ձեռ ևս ամրացված չե, — մի՞թե պարզ չե, վոր այդ տեսակի «քաղաքականությունը» կարող ե հաճելի և ոգտակար լինել միմիայն մեր յերդվյալ թշնամիներին»։

Տեղական կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի մեջ շատ ծոռւմներ են յեղել՝ կրոնի դեմ պայքարելու և կուլակին, վորպես դասակարգի, վոչնչացնելու խնդրում։

Կոմյերիտամիության Սամոյլովսկու ռայոնի կոմիտեն փորձել ե «կրոնը թաղել»։ Այդ նպատակով ռայոնական կոմիտեն կազմել ե մի քանի բրիգադներ կոմյերիտականներից, վորոնք մրցության կարգով շրջում եյին դյուլում և հավաքում եյին սրբապատկերները (իկոնա), վորպեսզի մոտակա բազարի որը այրեն հրապարակում։ Ճիշտ ե, կուսակցության ռայոնական կոմիտեյի միջամտությունը վերջ տվեց կրոնի դեմ պայքարելու այդ ձևին, իսկ կոմյերիտամիության ռայոնական կոմիտեյի զեկավարները հեռացվեցին այդ անկարգության պատճառով։

Հաճախ կոմյերիտական կազմակերպությունները և առանձին կոմյերիտականները նախաձեռնողներն եյին հանդիսանում ապակուլակացնելու միջակին, ընտրողական իրավունքներից զրկելու արժանի եյին գտնում նրանց, վորոնք մեր որենքներով չպետք ե զրկվեն ձայնի իրավունքից։

Բոլոր այս ծոռւմները հետևանք են կուսակցական հրամանների խախտման և մեր կուսակցության զեկավարող մարմինների վորոշումների ամենակոպիտ զանցառությունն են հանդիսանում, վորովհետեւ կուսակցությունը վոչ մի ժամանակ չի ասել, վոր պետք ե գյուղացիներին զոռով կոլխոզները մտցնել, կուսակցությունը յերբեք չի հրահանդել և չեր կարող հրահանգել, վոր համատարած կոլեկտիվացման ռայոններում կուլակներին լիկվիդացիայի յենթարկելիս պետք ե ապակուլակացնել նաև միջակին։

Մեր կուսակցությունը, կատարելով ընկ. Լենինի պատգամը, վորոշումներ ե կայացրել այն մասին, վոր կոլխոզները պետք է կազմակերպել հոժարակամության խստիվ սկզբունքով, միաժամանակ կազմակերպելով աշխատանք բարակների և չքալորների մեջ, ամրացնել կապը միջակ դյուլացիության հետ և վճռական պայքար մղել կուլակների դեմ:

Կուսակցությունը որեցոր իրադործել ե Լենինի պատգամը բանվոր դասակարգի և չքավորների կապի մասին միջակի հետ, ուստի նա չեր կարող լոգունդ արձակել, վոր համատարած կոլեկտիվացման ռայոններում կուլակի լիկվիդացիայի հետ միաժամանակ՝ ապակուլակացնեն նաև միջակին:

Ներկա տարվա մարտի 15-ին կայացրած իր վորոշման մեջ կուսակցության կենտրոնական կոմիտեն այս գնահատությունն ե տալիս կոլխոզային շնարարության մեջ տեղի ունեցած ծոռումներին և աղավաղումներին.

«Կասկած չի կարող լինել, վոր այս տեսակ պրակտիկան, վոր քողարկված ե «ձախ» խոսքերով, իսկապես յուղ և քում հականեղափոխականների հացին և վոչ մի առընչություն չունի մեր կուսակցության քաղաքականության հետ։ Կենտկոմը համարում ե. վոր այս բոլոր ծոռումները ներկայումս հիմնական արգելքն են հանդիսանում կոլխոզային շարժման հետագա զարգացմանը և ուղղակի ողնում են մեր դասակարգային թշնամիներին։ Կենտկոմը գտնում ե, վոր կոլխոզային շարժման հետագա արագ զարդացումը և կուլակության, վորպես դասակարգի, լիկվիդացիան՝ անհնարին կլինի կատարել, յեթե անհապաղ չլունչացվեն այդ ծոռումները։

«Ձախ» խոսքերի տակ կատարվող սխալներն ու կուսակցական գծի աղավաղումները նպաստավոր են կուլակին և ստեղծում են բարեհաջող պայմաններ աջ թեքման համար մեր կուսակցության և կոմյերիտմիության մեջ։ «Ձախ» ծոռումներ կատարողները կոլխոզային շնարարության մեջ՝ կոլեկտիվացումը «ձեռաց» կատարելու իրենց փորձերով

կոպտաբար աղավաղում եյին կուսակցության դիմը և դրանով հեշտացնում եյին աջ ուկղոնիստների պայքարը կուսակցության դեմ։ Դրա համար ել «ձախերը» հանդիսանում են աջերի դաշնակիցները։

Ահա թե ինչու աջ ուկղոնիստների դեմ հաջողութամբ պայքարելու համար հարկավոր ե վճռականապես վերացնել «ձախ» ոպորտունիստների սխալները։ Ահա թե ինչու կոմյերիտական կազմակերպությունների սպարտականությունն ե անխնա պայքար մղել ինչպես աջ թեքման դեմ, վոր դըլիսավոր վտանգն ե ներկայումս, նույնպես և «ձախ» ոպորտունիստների դեմ, վորոնք իրենց աղավաղումներով ոգնում են աջերին։ Յերկու ճակատում ևս մղվող պայքարում պետք ե դաստիարակել և կոել-կոփել կոմյերիտականներին, բոլոր ուժերը նվիրել կոլխոզների տնտեսական ամրացմանը, դյուլական տնտեսության հետագա կոլեկտիվացմանը։

Յուրաքանչյուր կոմյերիտական կազմակերպություն պարտավոր ե արագորեն ուղղելու իր սխալները և ողնելու կուսակցությանը՝ կատարված աղավաղումների լիկվիդացիայի խնդրում։ Իրենց գործնական աշխատանքի մեջ կոմյերիտական կազմակերպությունները պարտավոր են վճռականապես պայքարելու թե նրանց դեմ, վորոնք կոլխոզային շարժման պոչից են կառչած և թե նրանց դեմ, վորոնք աշխատում են առաջ վազել և այլպիսով կտրվում են մասսաների շարժումից։ Կոմյերիտմիության զեկալարող մարմինները դլխաղորապես այդ պետք ե սովորեն։

«Ղեկավարելու արվեստը լուրջ գործ ե։ Զի կարելի շարժումից յետ մնալ, վորովհետև յետ ընկնել, նշանակում ե կտրվել մասսայից։ Զի կարելի նաև առաջ վազել, վորովհետև առաջ վազել, նշանակում ե կորցնել կապը մասսաների հետ։ Ով ուղում ե զեկավարել շարժումը և միաժամանակ պահպանել կապը միլիոնավոր մասսաների հետ, նա պետք ե պայքարել յերկու ճակատում — և յետ մնացողների դեմ, և առաջ վաղողների դեմ (Ստալին. — «Գլխապտույտ հաջողություններից»)։

Նկատի ունենալով գյուղի վճռական շրջադարձը դեպի զարդացման սոցիալիստական ուղին և կոլխոզների ու սովորողների մասսայական շինարարությունը, — կուլակների վորպես դասակարգի, սկսված լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման պայմաններում նոր ձևով և դնում Խորհրդային իշխանության՝ գյուղում ունենալիք հենակետի հարցը:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն ընկ. Յակով-լեյ, XVI համագումարին ներկայացրած թեզիներում այսպես ե վորոշել Խորհրդային իշխանության՝ գյուղում ունենալիք հենակետի հարցը... «Այսուհետեւ ԽՍՀ Միության կարեռադույն հացածատ ուրիններում գյուղը բաժանված է յերկու հիմնական մասերի. կոլխոզնիկների, վորոնք Խորհրդային իշխանության իսկական և հաստատուն նեցուկն են կազմում գյուղում, և վոչ-կոլխոզնիկների, չքավորներից և միջակներից, վորոնք գեռ ևս չեն ցանկանում մտնել կոլխոզ, բայց վորոնց կոլխոզների մասսայական փորձն անկասկած կհամոզի համեմատաբար կարճ միջոցում անհրաժեշտորեն անցնելու կոլեկտիվացման ուղին» (ընկ. Յակովլեյի թեզիներից. «Կոլխոզային շարժումը և գյուղական տնտեսության վերելքը»):

Այն խնդիրները, վոր դրել ե մեր կուսակցությունը յերկի ինդուստրացման և գյուղական տնտեսության կոլեկտիվացման նկատմամբ, պահանջում են, վոր ամեն մի կոմյերիտական կազմակերպություն, ամեն մի կոմյերիտական ամենից առաջ յենթարկե իր բոլոր շահերը դասակարգային պայքարին: Ամեն կոմյերիտական պարտավոր ե իմանալ, վոր մեր սոցիալիստական շինարարությունը քաղաքում և գյուղում իրագործվում ե կատաղի կովի պայմաններում, վոր մենք վարում ենք մեր դասակարգային թշնամու դեմ մեր յերկրի ներսում և ամեն մի հաջողությունը սոցիալիստական շինարարության ճակատում առաջ ե բերում կատաղություն, թշնամական ատելություն կապիտալիստական յերկրների բուրժուազիայի կողմից:

Կոմյերիտմիության յերրորդ համագումարում, 1920 թ. նոյեմբերին, ընկ. Լենինը Յերիտասարդական կոմունիստա-

կան Միության խնդիրների մասին արտասանած իր ճառի ժեղանակները:

«Դասակարգային պայքարը շարունակվում ե, նա միայն փոխել ե իր ձևերը. պրոլետարիատի այդ դասակարգային պայքարը նրա համար ե, վոր հին շահագործողները չկարողանան վերադառնալ, վոր մութ գյուղացիության բաժանմաժան մասսան միանա մի միության մեջ: Դասակարգային պայքարը շարունակվում ե, և մեր անելիքն ե — յենթարկել բոլոր շահերը այդ պայքարին»:

Կարողանալ յենթարկել բոլոր շահերը դասակարգային թշնամու գեմ մղվող պայքարին միշտ և ամենուրեք լինել նախաձեռնող, հարվածային բրիգադ. կազմակերպել բատրակային և չքավորական յերիտասարդությունը, շարունակ աշխատել նրա հետ. հմտորեն և համբերությամբ բացատրել աշխատել նրա հետ. հմտորեն և համբերությամբ բացատրել կան տնտեսությունը վերակառուցել սոցիալիստական հիմունքով, —

Ահա գլխավորը և եյականը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Առաջին կոլխոզը — «Բատրակ»	5
Կուլակի նոր լոգունքները	8
Կյանքից չպետք է յետ մնալ	12
«Մասսվետ կոմսոմոլա» կոմունան	13
Կրիուշիայի որինակելի կոլխոզը	20
Աշխատանքի կազմակերպման փորձը կոլխոզներում	25
Դասակարգային պայքարը կոլխոզներում	29
Կոմյերիտականները — տրակտորի վրա	34
Վերցնենք շեֆությունը մեքենաների վրա	37
Զինենք կոլխոզնիկներին գյուղատնտեսական գիտելիքներով	41
Ամրացնենք կոլխոզների տնտեսական կյանքը	47
Ուշադրություն կոլխոզներին	49
Պայքարելով յերկու ճակատում, ամրացնենք գասակարգային մարտունակությունը	51



C 31-K
1104

20 коп.

1.8038

Цена 20 коп. 649
О. П. 2.

90M

1
2



И. ГАВРЮШИН
Комсомольская ячейка
в районе сплошной
коллективизации

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.